ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության արտահերթ խորհրդարանական ընտրություններՀունիսի 20, 2021թ.

Հայտարարություն նախնական արդյունքների և եզրակացությունների վերաբերյալ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021թ. հունիսի 20-ին Հայաստանի Հանրապետությունում կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունները եղել են մրցունակ և, ընդհանուր առմամբ, կառավարվել են պատշաճ կերպով հաշվի առնելով վերջիններիս կազմակերպման համար նախատեսված կարճ ժամանակահատվածը: Այնուհանդերձ, դրանք բնութագրվել են ինտենսիվ սուր բևեռացվածությամբ և առանցքային մասնակիցների կողմից գործածվող աճող սադրիչ հռետորաբանությամբ: Իրավական դաշտն, ընդհանուր առմամբ, համապարփակ է, սակայն այն փաստը, որ փոփոխություններն ընդունվել են ընտրությունների անցկացման ժամկետին այդքան մոտ ժամանակահատվածում, հանգեցրել է որոշակի իրավական անորոշության: Ընտրությունները կազմակերպող և անցկացնող մարմինն իր աշխատանքը կատարել է թափանցիկ, կոլեգիալ և մասնագիտորեն, և վայելել է ընտրական շահառուների վստահությունը: Ընտրողներն ունեցել են ընտրության լայն հնարավորություն, հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ընդհանուր առմամբ, հարգվել են: Մասնակիցները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել: Այնուհանդերձ, քարոզչության բացասական տոնայնությունը և անձնավորվածությունը խոչընդոտել են քաղաքական շեշտադրմամբ բանավեճերի անցկացմանը: Ընդհանուր առմամբ, քարոզարշավի ողջ ընթացքում կանայք եղել են հետին պլանում: Ընտրությունների օրը, այդ թվում նաև ձայների հաշվարկը, ընդհանուր առմամբ դրական են գնահատվել:

Արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման մասին որոշումը կայացվել է Լեռնային Ղարաբաղում պատերազմի դադարեցման նպատակով Ադրբեջանի հետ կնքված հրադադարի հայտարարությանը հաջորդած հակակառավարական ցույցերի արդյունքում: Հրադադարի հայտարարությունը հաջորդել է Լեռնային Ղարաբաղում և դրա շուրջ 44-օրյա պատերազմին: Ընտրությունները կայացել են Հայաստանի և Ադրբեջանի միջև շարունակվող լարվածության համատեքստում: Ազգային անվտանգության հարցերը գերակայել են քաղաքական դիսկուրսում՝ ստվերելով քաղաքականության այլ հիմնախնդիրներ, և կոշտ հռետորաբանությունը ավելի է սրել արդեն իսկ բևեռացած քաղաքական միջավայրը:

Իրավական դաշտը մեծամասամբ նպաստավոր է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար և, չնայած որոշ թերությունների, ապահովում է ընտրական

գործընթացի բաղադրիչների համապարփակ կարգավորում: 2016թ. ընդունված ընտրական օրենսգիրքը փոփոխվել է 2021թ. ապրիլ և մայիս ամիսներին՝ ընտրությունները նշանակելուց կարճ ժամանակ առաջ: Փոփոխությունները հանրայնորեն քննարկվել են և աջակցության են արժանացել կուսակցությունների և քաղաքացիական հասարակության խմբերի մեծ մասի կողմից. առաջարկվող ընտրական բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկումը հիմնականում ընկալվել է որպես ներառական: Այդուհանդերձ Ազգային ժողովի կողմից փոփոխությունների ուշ ընդունումը և նախագահի կողմից առաջարկները չստորագրելու որոշումը ազդել են իրավական որոշակիության վրա՝ չապահովելով բավականաչափ ժամանակ՝ կարգավորումները կիրարկելու և ընտրողներին նոր ընթացակարգերի մասին իրազեկելու համար:

Ապրիլին տարածքային բաց ցուցակների վերացումը հանգեցրեց այն հանգամանքին, որ ընտրողները փակ համամասնական համակարգի մեկ համապետական ցուցակով ընտրում են առնվազն 101 պատգամավոր՝ հնգամյա ժամկետով: Մանդատների բաշխումը տեղի է ունենում հետևյալ կերպ. կուսակցությունները պետք է ստանան ընտրողների քվեների առնվազն հինգ տոկոսը, իսկ կուսակցությունների դաշինքները՝ քվեների առնվազն յոթ տոկոսը: Այս շեմը շարունակում է մնալ բարձր հայտարարված զուտ համամասնական համակարգին անցման նպատակի տեսանկյունից: Օրենքը նախատեսում է մինչև չորս մանդատ ազգային փոքրամասնության ներկայացուցիչների համար՝ առավել մեծ թվով չորս ազգային փոքրամասնություններից (եզդիներ, ռուսներ, ասորիներ և քրդեր) յուրաքանչյուրին մեկ մանդատի տրամադրման սկզբունքով:

Ընտրությունների վարչարարությունն իրականացվում է եռաստիճան համակարգով, որը կազմված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովից (ԿԸՀ), 38 տարածքային ընտրական հանձնաժողովներից (տարածքային ԸՀ) և 2008 տեղամասային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ): ԿԸՀ-ն իր աշխատանքն իրականացրել է կոլեգիալ, թափանցիկ կերպով և մասնագիտորեն, պահպանելով օրենքով սահմանված բոլոր վերջնաժամկետները՝ չնայած նախապատրաստական աշխատանքների համար տրամադրված կարճ ժամանակահատվածին: Ընտրությունները դիտարկող միջազգային առաքելության (ԸԴՄԱ) զրուցակիցների մեծ մասը վստահություն է հայտնել ԿԸՀ-ի՝ իր մանդատը մասնագիտորեն իրականացնելու կարողությունների վերաբերյալ: Բարձրաձայնվել են որոշ մտավախություններ ընտրությունների վարչարարությամբ զբաղվող մարմինների անկախ գործելու կարողության առթիվ: Թեև տարածքային ԸՀ-ները ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից հիմնականում գնահատվել են արհեստավարժ և բաց, տարածքային ԸՀ-ների որոշումները, հակառակ օրենքի պահանջների, առցանց չեն հրապարակվել և չեն ցուցադրվել հանրային իրազեկման նպատակով: Օրենքի պահանջին համաձայն, ՏԸՀ ղեկավար հաստիքները բաշխվել են արձակված խորհրդարանում ներկայացված խմբակցությունների միջև այն համամասնությամբ, որով վերջիններս ներկայացված են խորհրդարանում, այդպիսով իշխող կուսակցությանն ապահովելով հաստիքների գերակշիռ մեծամասնություն: Կանայք

պատշաճ ներկայացված են եղել ՏԸՀ-ներում, ի տարբերություն ԿԸՀ-ի և տարածքային ԸՀ-ների, որտեղ նրանք ներկայացված են եղել անդամների մոտավորապես մեկ երրորդի չափով:

Հունիսի 13-ի դրությամբ ընտրողների ռեգիստրում գրանցված են եղել ընտրելու իրավունք ունեցող 2.6 միլիոն քաղաքացի, այդ թվում զգալի թվով արտերկրում բնակվողներ, ովքեր շարունակում են մնալ ընտրողների ցուցակում, քանի որ պաշտոնապես ունեն Հայաստանի ռեզիդենտի կարգավիճակ: 18 տարին լրացած բոլոր քաղաքացիներն ունեն ընտրելու իրավունք՝ բացառությամբ ծանր հանցանքի համար դատապարտվածների կամ դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչվածների: Մտավոր հաշմանդամության հիմքով ընտրելու իրավունքից զրկումը հակասում է միջազգային չափանիշներին: Օրենքի պահանջին համաձայն ընտրողների ցուցակները ներկայացվել են հանրային ծանոթացման և ընտրողները կարողացել են ուղղումներ պահանջել: ԸԴՄԱ զրուցակիցները բավարարված են եղել թափանցիկության մակարդակով և ընտրողների ռեգիստրի ճշգրտության առնչությամբ մտահոգություն չեն հայտնել: ԿԸՀ-ից պահանջվում է մինչև հունիսի 22-ը հրապարակել բոլոր ընտրատեղամասերի ընտրողների ստորագրված ցուցակների սկանավորված տարբերակները: Մինչ միջազգային ստանդարտները և լավագույն փորձը խրախուսում են տվյալների գաղտնիության և անհատ ընտրողների մասնակցության գաղտնիության ապահովումը, բոլոր ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցները հավանության են արժանացրել թափանցիկության խթանման և ընտրախախտումների կանխման այս միջոցը:

Գրանցման գործընթացը եղել է ներառական, ԿԸՀ-ն գրանցել է 22 կուսակցությունների և 4 դաշինիքների թեկնածուների ցուցակներ, ընդհանուր, թվով 2 623 թեկնածու, որոնցից 965-ը՝ կին (37 տոկոս), այդպիսով ընտրողների համար ապահովելով կուսակցությունների և դաշինքների ընտրության լայն շրջանակ: Մեկ կուսակցության ինքնաբացարկից հետո ընտրություններում մրցակցել են ընդհանուր, թվով 21 կուսակցություն և 4 դաշինք: Բոլոր ցուցակները ամբողջությամբ համապատասխանել են 30 տոկոս սեռերի քվոտայի պահանջին: Օրենքն ինքնաառաջադրման հնարավորություն չի ընձեռում թեկնածուներին, ինչը հակասում է 1990թ. Կոպենհագենի փաստաթղթի 7.5 կետին:

Հիմնարար իրավունքները և ազատությունները հիմնականում հարգվել են, և մրցակիցներն ունեցել են ազատ քարոզարշավ անցկացնելու հնարավորություն: Օրենքի պահանջին համապատասխան պաշտոնական քարոզարշավը տևել է 12 օր: Այդուհանդերձ, պաշտոնական քարոզարշավին նախորդող ժամանակահատվածի իրավական կարգավորման բացակայության պայմաններում որոշ կուսակցություններ սկսել են քարոզարշավ իրականացնել ավելի վաղ: Ընտրական պայքարի որոշ մասնակիցներ մտահոգություն են հայտնել ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին առ այն, որ պաշտոնական քարոզարշավի կարճ ժամկետներն այս ընտրություններում առավել նպաստավոր պայմաններ են ստեղծել ավելի կայացած կուսակցությունների համար: Քարոզարշավը բնութագրվել է որպես խիստ բևեռացված և հաճախ բախումնային: Քաղաքական գործիչների կողմից կոշտ և վարկաբեկող

խոսքը որակազրկել է բանավեճը: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն դիտարկել է մասնավոր և հանրային ոլորտների աշխատողների նկատմամբ քաղաքական դերակատարների և գործատուների կողմից ճնշում գործադրելու դեպքեր քարոզարշավի միջոցառումներին մասնակցելու նպատակով: ԸԴՄԱ-ն ստացել է նաև ընտրակաշառքների մասին հաղորդումներ:

Օրենքը նախատեսում է քարոզարշավի ֆինանսավորում մասնավոր և հանրային աղբյուրներից: Օրենքը սահմանում է մուծումների ու ծախսերի առավելագույն չափերը: Թեև կանոնները մշակված են մանրամասնորեն, մի շարք թերություններ թույլ են տալիս շրջանցել իրավական դրույթները: Մասնավորապես, քարոզչության ծախսերի իրավական սահմանումը չի անդրադառնում կազմակերպչական ծախսերին՝ հակառակ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից բազմակի և տևական հանձնարարականներին: ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (ՎՎԾ) վերահսկում է մրցակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից քարոզչության ֆինանսավորումը կարգավորող օրենսդրության պահպանումը: ՎՎԾ-ն հրապարակել է համառոտ տվյալներ մրցակիցների մուծումների և ծախսերի չափի մասին և առցանց հրապարակել նրանց նախընտրական ֆինանսական հաշվետվությունները, ինչը նպաստել է ֆինանսական թափանցիկությանը:

Սահմանադրությամբ երաշխավորվող խոսքի ազատությունը պահպանվել է: Մեդիա միջավայրը բազմազան է, թեև շատ հեռարձակողներ ունեն վառ արտահայտված քաղաքական պատկանելիություն: Հեռուստատեսությունը քաղաքական տեղեկատվության առաջնային աղբյուրն է, շատ կարևոր է նաև սոցիալական ցանցերի դերը: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից իրականացվող լրատվամիջոցների մշտադիտարկումը ցույց է տվել, որ խոշոր հեռարձակողները նկատելի ջանքեր են գործադրել ընտրություններին մասնակցող մրցակիցների լայն շրջանակ լուսաբանելու ուղղությամբ՝ նպաստելով ընրողներին իրազեկված ընտրություն կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովմանը: Հանրային հեռուստաընկերությունը մրցակիցների համար ապահովել է հիմնականում հավասարակշռված լուսաբանում, այնուամենայնիվ ալիքը վարկաբեկիչ խոսքի պատճառով խմբագրել է մի ընդդիմադիր կուսակցության գովազդային հոլովակը: Որոշ նորաստեղծ կուսակցություններ մատնանշել են ավանդական ԶԼՄ-ների կողմից ոչ բավարար լուսաբանումը և փոխարենը օգտագործել են սոցիալական ցանցերը: Մի քանի լրատվամիջոցներ կազմակերպել են բանավեճեր, ներառյալ հանրային հեռուստաընկերությունը: Այնուհանդերձ մրցակցող կուսակցությունների և դաշինքների ղեկավարների կեսից ավելին հրաժարվել են մասնակցել հանրային հեռուստատեսության կողմից կազմակերպված երկու ամփոփիչ բանավեճերին, որը բացասական է անդրադարձել վերջիններիս տեղեկատվական արդյունավետության վրա:

Ըստ Ընտրական օրենսգրքի, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողովում,

մինչդեռ ԿԸՀ-ն ընդդատյա է Վարչական դատարանին: Հակառակ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների՝ բողոքներ ներկայացնելու իրավունքը կարգավորող կանոնները շարունակում են սահմանափակ մնալ: ԿԸՀ-ն ստացել է 22 բողոք, և մինչև քվեարկության օրը 21 բողոք հասցեագրվել է Վարչական դատարան: Ավելին, հակառակ նախկին հանձնարարականների, օրենքը սահմանափակում է քվեարկության արդյունքների բողոքարկման իրավունքը:

Մինչև հունիսի 5-ի սահմանված վերջնաժամկետը ԿԸՀ-ն ընտրությունները դիտարկելու համար հավատարմագրել է 19 քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ)՝ ընդհանուր, թվով 8 748 դիտորդով, ութ միջազգային կազմակերպություն և քսան դիվանագիտական և արտաքին պատվիրակություն: Որոշ ՔՀԿ դիտորդական խմբեր մտահոգություն են հայտնել, որ ընտրությունների հավատարմագրման վերջնաժամկետը՝ ընտրություններից 15 օր առաջ, բարդություններ է առաջացրել դիտորդներ հավաքագրելու առումով:

Քվեարկության օրը հիմնականում խաղաղ է եղել՝ ԿԸՀ հայտարարության համաձայն ընտրողների 49.4 տոկոս մասնակցությամբ: ՄԸԴԱ դիտորդները դիտարկված ընտրատեղամասերի բացման և քվեարկության գործընթացը մեծամասամբ գնահատել են դրական: Այնուամենայնիվ ԸԴՄԱ դիտորդները զեկուցել են կուսակցությունների և դաշինքների վստահված անձանց կողմից գործընթացին միջամտելու, հաճախակի կուտակումների որոշ դեպքերի մասին, ինչպես նաև COVID-19 համավարակի պաշտպանության/կանխարգելման միջոցառումների նկատմամբ ընդհանուր անտեսման մասին: Ընտատեղամասերի մեծ մասը հասանելի չեն եղել ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար: ԸԴՄԱ դիտորդները զեկուցել են լարվածության և հուզումների որոշ դեպքերի, ինչպես նաև ընտրակաշառքի և ընտրողների նկատմամբ ճնշման գործադրման առանձին դեպքերի մասին: ԸԴՄԱ դիտորդները նշել են միայն մի քանի ընթացակարգային խախտումների մասին: Ձայների հաշվարկը դրական է գնահատվել դիտարկված ընտրատեղամասերի մեծ մասում և բնութագրվել է թափանցիկության բարձր մակարդակով: Ամփոփման և ձայների հաշվարկի գործընթացները հիմնականում պահպանվել են և ԸԴՄԱ դիտորդները նշել են միայն մի քանի ընթացակարգային վրիպակների և լուրջ խախտումների մասին: Մի քանի տարածքային ԸՀ-ներում թերի կազմակերպվածությունը, անբավարար տարածքը և կուտակումները բացասաբար են անդրադարձել ընթացքի և թափանցիկության վրա:

ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախադրյալներ և քաղաքական համատեքստ

2021թ. մարտի 18-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ հունիսի 20-ին անցկացվելու են արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Նա հրաժարական է տվել ապրիլի 25-ին՝ օրենքով սահմանված ժամկետների պահպանմամբ, և մայիսի 10-ի նախագահի հրամանագրով նշանակվել են ընտրություններ: Արտահերթ ընտրություններ անցկացնելու որոշումը կայացվել է 2020թ. նոյեմբերին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ Ադրբեջանի հետ հրադադարի մասին հայտարարության ստորագրմանը հաջորդած հակակառավարական բողոքների արդյունքում: Հրադադարի մասին հայտարարությունը հաջորդել է Լեռնային Ղարաբաղում և դրա շուրջ 44-օրյա պատերազմին:

Ընտրություններն անցել են Հայաստանի և Ադրբեջանի միջև շարունակվող լարվածության մթնոլորտում: Այս ընտրությունների ընթացքում քաղաքական դիսկուրսում գերակշռել է ազգային անվտանգության իրավիճակը: COVID-19 համավարակը ավելի է սրել պատերազմի արդյունքում տնտեսական անկումը՝ ազդելով ընտրական միջավայրի վրա: Ընտրությունների նախօրեին քաղաքական միջավայրը եղել է խիստ բևեռացված,[1] հաճախ անձնավորված և բնութագրվել է ագրեսիվ մեղադրանքներով և սադրիչ հռետորաբանությամբ:

Ամենավերջին խորհրդարանական ընտրությունները եղել են 2018թ. դեկտեմբերին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունները: Դրանց արդյունքում ձայների 70,4 տոկոսով հաղթել է պարոն Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գլխավորած «Իմ Քայլը» դաշինքը՝ ստանալով խորհրդարանի 132 մանդատներից 88-ը: «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները 5 տոկոսի շեմը հաղթահարած այլ կուսայցություններն էին՝ համապատասխանաբար 26 և 18 մանդատով:

Իրավական դաշտը և ընտրական համակարգը

Խորհրդարանական ընտրությունները կարգավորվում են 1995թ. Սահմանադրությամբ (որը վերջին անգամ փոփոխության է ենթարկվել 2015թ. Հանրաքվեով), 2016թ. Ընտրական օրենսգրքով և այլ օրենքներով:[2] Հայաստանը հանդիսանում է ժողովրդավարական ընտրություններին վերաբերող հիմնական միջազգային պայմանագրերի կողմ: Ընդհանուր

[1] 2018-ի հուլիսին նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի դեմ քրեական վարույթ է հարուցվել սահմանադրական կարգը տապալելու մեղադրանքով: Այս վարույթն ավարտվել է 2021թ. մարտին, երբ Սահմանադրական դատարանի որոշմամբ հոդվածը, որով նրա դեմ առաջադրված մեղադրանքը , ճանաչվեց հակասահմանադրական, քանի որ այն չէր համապատասխանում որոշակիության և համաչափության սկզբունքներին(տե՛ս Բողոքներ և բողոքներ)

[2] Ինչպես նաև «Կուսակցությունների մասին» և «Հավաքների ազատության մասին» օրենքներով, ՀՀ վարչական դատավարության, ՀՀ վարչական իրավախախտումների մասին և ՀՀ քրեական օրենսգրքերով:

առմամբ, իրավական դաշտը նպաստում է ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը:[3]

Ընտրական իրավական դաշտը նախատեսում է ընտրությունների վարչարարությանը, ընտրողների ցուցակներին և ընտրողների նույնականացմանն առնչվող հարցերի համապարփակ կարգավորում: Թեև թեկնածուների գրանցման, քարոզչության և քարոզչության ֆինանսավորման կանոնները մանրամասն մշակված են, որոշ թերություններ, որոնք նախկինում մատնանշվել են ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի («Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով) կողմից, մնում են չլուծված: [4] Դրանց թվին են պատկանում երկքաղաքացիություն ունեցող անձանց՝ ընտրություններում իրենց թեկնածությունն առաջադրելու իրավունքի սահմանափակումները,[5] քարոզչության ֆինանսավորման հաշվետվությունների ուսումնասիրման կարճ ժամկետը, ինչպես նաև քարոզչական ծախսերի նեղ սահմանումը: Թեև բողոքների և դիմումների քննությանը և իրավախախտումներին առնչվող հարցերը օրենսդրորեն պատշաճ կարգավորված են, օրենսդրական դաշտի վերանայումը կարող է շահեկան լինել (տե՛ս Քարոզարշավի ֆինանսավորում և Բողոքներ և դիմումներ բաժինները):

Ընտրական օրենսգիրքն ընդունվել է 2016թ., որից հետո մի քանի անգամ ենթարկվել է փոփոխությունների:[6] 2021թ. ապրիլ-մայիս ամիսներին, ընտրությունների նշանակումից անմիջապես առաջ, խորհրդարանն ընդունել է փոփոխությունների երկու փաթեթ:[7] Ապրիլի

---

[3] Ներառյալ 1950թ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), 1965թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան, 1979թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), 2003թ. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան և 2006թ. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (CRPD): Հայաստանը նաև անդամակցում է «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի Հանձնաժողով) և Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբին (ԳՐԵԿՈ):

[4] Տե՛ս 2016թ.ապրիլի և 2016թ. հունիսի ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի Ընտրական օրենսգրքի բարեփոխումների վերաբերյալ համատեղ կարծիքը:

[5] Քրեական օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունները ավելի հեռուն են գնացել քրեականացնելով երկքաղաքացիության փաստը թաքցնելը, այդ թվում՝ ընտրություններին մասնակցելու համար, որպես պատիժ սահմանելով մինչև 5 տարի ազատազրկում: Վենետիկի հանձնաժողովը նախկինում հայտարարել է, որ այս փոփոխությունը պետք է դիտարկվի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի լույսի ներքո: Քանի դեռ Հայաստանը ընդունում է երկքաղաքացիությունը, վերջինս չպետք է հիմք հանդիսանա խորհրդարան ընտրվելու իրավունքից զրկման և հետևապես, չպետք է քրեականացվի: Տես՝ ՄԻԵԴ-ի՝ "Թենասեն ընդդեմ Մոլդովայի" գործով 2010թ. ապրիլի 10-ի որոշումը, Դիմում թիվ 7/08:

[6] 2018 թ. Ընտրական օրենսգրքի և խորհրդարանական ընտրություններին վերաբերող այլ օրենքների փոփոխություններով, ի թիվս այլ կարգավորումների, ներդրվել են միջոցներ պետական ռեսուրսների չարաշահման դեմ, վերացվել են ընտրություններին ՋԼՄ ներկայացուցիչների հավատարմագրման սահմանափակումները և սահմանվել են ավելի մեծ պատժամիջոցներ ընտրական իրավախախտումների համար:

[7] Առաջարկվող բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկումը սկսվել է 2020թ.-ին, և առաջարկվող բարեփոխումները վերանայվել են: Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի ու ԺՀՄԻԳ-ի հրատապ համատեղ

1-ի փոփոխություններով վերացել են թեկնածուների տարածքային ցուցակները, ինչն ի թիվս այլ ընթացակարգային փոփոխությունների պահանջել է փոփոխություններ թեկնածուների առաջադրման և գրանցման, մանդատների բաշխման, ինչպես նաև քվեարկության օրվա ընթացակարգերում: Այս փոփոխություններն ընդունվել են խորհրդարանի 132 պատգամավորների 82 ձայների մեծամասնությամբ, մասնավորապես «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները չեն մասնակցել քվեարկությանը:[8] Թեև անցումը մեկ համապետական ընտրատարածքի եղել է տևական բանավեճի առարկա և աջակցություն է գտել մեծ թվով քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության դերակատարների կողմից, ԸԴՄԱ-ի որոշ զրուցակիցներ նշել են, որ փոփոխությունների ընդունումը շատ մոտ է եղել ընտրությունների անցկացման օրվան: Հանրապետության Նախագահը նախընտրել է չստորագրել փոփոխությունները՝ վկայակոչելով դրանց ընդունման ժամանակը և խորհրդարանում կոնսենսուսի բացակայությունը:[9] Փոփոխությունների երկրորդ՝ ավելի ընդգրկուն փաթեթը, որը չի կիրառվելու այս ընտրություններում, ընդունվել է 2021թ. մայիսի 7-ին: Մինչև փոփոխությունների երկու փաթեթների ընդունումը և ստորագրումը ընտրական շահառուների համար անորոշ է եղել, թե որ փոփոխություններ են կիրառվելու սույն ընտրություններում, ինչն ազդել է իրավական որոշակիության վրա և սահմանափակ ժամանակ է թողել կարգավորումների կիրարկման և նոր ընթացակարգերի վերաբերյալ ընտրողների իրազեկման համար:[10]

Այս խորհրդարանական ընտրություններում ընտրողներն ընտրելու են առնվազն 101 պատգամավոր՝ մեկ համապետական ընրատարածքի փակ ընտրական ցուցակներով համամասնական համակարգով: Պատգամավորներն ընտրվում են հինգ տարի ժամկետով: Խորհրդարանում մանդատներ ստանալու համար կուսակցությունները պետք է հաղթահարեն առնվազն 5%-ի, իսկ երկու կամ ավելի կուսակցությունների դաշինքները՝ առնվազն 7%-ի շեմը:[11] Հինգ տոկոսի շեմն իջեցնող փոփոխությունը ուժի մեջ չի մտել այս

կարծիքը Հայաստանի Ընտրական օրենսգրքում և հարակից օրենսդրությունում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

8 «Լուսավոր Հայաստանը» հիմնականում առարկել է փոփոխությունների համար ընտրված ժամանակի դեմ,«Բարգավաճ Հայաստանը» բոյկոտել է խորհրդարանական քվեարկությունների մեծամասնությունը 2021 թ.հունվարից սկսած:

9 Նախագահի ստորագրության համար Սահմանադրությամբ սահմանված 21-օրյա ժամկետը լրանալուց հետո փոփոխությունները ստորագրվել են ԱԺ նախագահի կողմից և օրինական ուժի մեջ են մտել 2021թ. ապրիլի 27-ին:

10 Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) տեղեկացրել է ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իր ցուցումները ժամանակին թարմացնելու համար հանձնաժողովը ստիպված է եղել գործընթացը սկսել օրենքի նախագծի հիման վրա՝չիմանալով, թե որ դրույթներն է ի վերջո ընդունելու խորհրդարանը

11 ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը նախկինում նշել են, որ «կուսակցությունների դաշինքները կարող են ավելի համագործակցային միջավայր և կայուն կառավարություն ապահովել: Հետևաբար դաշինքների համար սահմանված շեմը կարող էր լինել նույնը, ինչ կուսակցությունների համար»:

ընտրությունների համար: Այս շեմը շարունակում են բարձր մնալ զուտ համամասնական համակարգի անցման հայտարարված նպատակի տեսանկյունից:[12] Ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ այս շեմը հաղթահարում են երկուսից պակաս կուսակցություն և (կամ) դաշինք, ապա առավելագույն թվով քվեներ ստացած երեք կուսակցությունները կամ դաշինքները ստանում են խորհրդարանական ներկայացուցչություն: Համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներից բացի, օրենքը նախատեսում է մինչև 4 մանդատ ազգային փոքրամասնության ներկայացուցիչների համար՝ առավել մեծ թվով չորս ազգային փոքրամասնություններից (եզդիներ, ռուսներ, ասորիներ և քրդեր) յուրաքանչյուրին մեկ մանդատ բաշխելու սկզբունքով:[13]

Սահմանադրությունը պահանջում է համամասնական ընտրական համակարգով ընտրական մրցույթ և բազմակուսակցական համակարգ: Սահմանադրությունը նաև պահանջում է խորհրդարանական կայուն մեծամասնություն (որն Ընտրական օրենսգրքով սահմանվում է որպես մանդատների 54 տոկոսը) կառավարություն ձևավորելու համար: Եթե հաղթող կուսակցությունը կամ դաշինքը ստանում է մանդատների ընդհանուր թվի առնվազն 50 գումարած մեկ տոկոսը, սակայն 54 տոկոսից պակաս, ապա կուսակցությունը կամ դաշինքը ստանում է այնքան լրացուցիչ մանդատներ, որքան անհրաժեշտ է կայուն մեծամասնություն ձևավորելու համար:[14] Եթե ընտրությունների արդյունքում ոչ մի կուսակցություն կամ դաշինք չի ստանում մանդատների 50 գումարած մեկ տոկոսը, և քվեարկության արդյունքների ամփոփումից հետո վեց օրվա ընթացքում քաղաքական կոալիցիա կազմելու ճանապարհով կայուն մեծամասնություն չի ձևավորվում, անցկացվում է ընտրությունների երկրորդ փուլ՝ երկու առավելագույն ձայներ ստացած ընտրական ցուցակների միջև, ընտրությունների օրվանից հետո՝ 28-րդ օրը: Երկրորդ փուլ անցած երկու մրցակիցներին թույլատրվում է նոր դաշինքներ կազմել առաջին փուլի մասնակից մյուս կուսակցությունների հետ:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունների վարչարարությունն իրականացվում է եռաստիճան համակարգով, որը կազմված է ԿԸՀ-ից, 38 տարածքային ընտրական հանձնաժողովներից (տարածքային ԸՀ) և

---

12 Տե՛ս 2016թ. ապրիլի ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ համատեղ կարծիքը:

13 Հիմք ընդունելով վերջին մարդահամարը, որն անցկացվել է 2011թ., եզդիներին բաժին է ընկնում բնակչության 1.1 տոկոսը, ռուսներին՝ 0,3 տոկոսը, իսկ ասորիներին և քրդերին՝ յուրաքանչյուրին 0,1 տոկոսից պակաս: ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը նախկինում նշել էին, որ «ազգային փոքրամասնությունների լրացուցիչ տեղերի բաշխումը կարող է փոխել կուսակցությունների միջև քաղաքական հավասարակշռությունը»: Արձակված խորհրդարանում բոլոր չորս մանդատները ստացել էր «Իմ քայլը» դաշինքը:

14 Ընտրական օրենսգիրքը նախատեսում է նաև, որ եթե հաղթող կուսակցությունը կամ կոալիցիան ստանում է խորհրդարանի մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին, ապա շեմը հաղթահարած ավելի փոքր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները ստանում են այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որ արդյունքում ընդդիմադիր կուսակցությունների մանդատների ընդհանուր թիվը հասնի Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի 1/3-ին:

2008 տեղամասային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ): ԿԸՀ-ն մշտապես գործող մասնագիտական մարմին է՝ կազմված յոթ անդամներից, ովքեր ընտրվում են վեցամյա ժամկետով՝ առավելագույնը երկու անգամ հաջորդաբար վերընտրվելու հնարավորությամբ: ԿԸՀ-ն իր ներկա կազմով ընտրվել է 2016 թ. հոկտեմբերին:[15] ԸԴՄԱ զրուցակիցները վստահություն են հայտնել իր մանդատը պրոֆեսիոնալ կերպով կատարելու ԿԸՀ կարողությունների նկատմամբ: ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցների մեծ մասը մտահոգություն են հայտնել ընտրությունների վարչարարություն իրականացնող մարմնի անկախ գործելու կարողության առնչությամբ:

Չնայած նախապատրաստվելու համար կարճ ժամանակին՝ ԿԸՀ-ն կազմակերպել է իր աշխատանքը թափանցիկ, կոլեգիալ և արդյունավետ կերպով՝ հետևելով օրենքով սահմանված բոլոր վերջնաժամկետներին: ԿԸՀ նիստերը հեռարձակվել են ուղիղ եթերով, և դրանց մասնակցել են կուսակցությունների ու դաշինքների վստահված անձինք, դիտորդներ, ԶԼՄ ներկայացուցիչներ: Նիստերի օրակարգերը և որոշումները ԿԸՀ կայքում հրապարակվել են ժամանակին: ԿԸՀ-ի կողմից մշակվել են ընտրության օրվա ընթացակարգեր և ուղեցույցներ ՏԸՀ անդամների, ընտրողների նույնականացման սարքերի (ԸՆՍ) մասնագետների, ինչպես նաև դիտորդների ու վստահվանծ անձանց համար:

Չնայած ԿԸՀ-ն ունի կարգադրություններ տալու կարգավորիչ լիազորություններ, ընտրությունների օրվա ընթացակարգերի վերաբերյալ պարզաբանումների զգալի մասը չի քննարկվել և ընդունվել ԿԸՀ նիստերում: Հատկանշական է, որ քվեաթերթիկների վավերության որոշումը պատշաճ կերպով կանոնակարգված չէ: COVID 19-ի համավարակի պայմաններում ընտրական գործընթացները կանոնակարգող սահմանափակ ընթացակարգեր են ընդունվել, որոնցում սակայն անդրադարձ չի կատարվել մարդկանց հնարավոր կուտակումներին: ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները դրական են գնահատել ՏԸՀ անդամների վերապատրաստումները:

ԿԸՀ-ի՝ ընտրողների իրազեկման արշավը մեկնարկել է ընտրության օրվանից 20 օր առաջ: Այն ներառել է պաստառներ, բրոշուրներ, ինչպես նաև նոր ընտրական ընթացակարգերի վերաբերյալ հեռուստատեսային և ռադիո հոլովակներ՝ ներառյալ չորս ազգային փոքրամասնությունների լեզուներով, տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձանց համար, ինչպես նաև, քաղաքացիական հասարակության աջակցությամբ՝ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար: ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները նկատել են, որ ԿԸՀ-ի կողմից իրականացվող ընտրողների իրազեկման արշավի տեսանելիությունը եղել է սահմանափակ երկրի ամբողջ տարածքում:

---

15 ԿԸՀ անդամները նշանակվել էին բոլոր պատգամավորների ձայների երեք հինգերորդով: Մինչ 2016թ. ԿԸՀ անդամներին նշանակում էր նախագահը: Հինգ անդամներ՝ ներառյալ նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարը, առաջին անգամ նշանակվել են 2011-ին: Մյուս երկու անդամները առաջին անգամ նշանակվել են 2014 և 2015թթ.:

Տարածքային ԸՀ-ները յոթ անդամից կազմված մշտական մասնագիտական մարմիններ են, որոնք նշանակվում են ԿԸՀ-ի կողմից վեցամյա ժամկետով: ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները տարածքային ԸՀ-ները գնահատել են որպես ընդհանուր առմամբ մասնագիտացված, տարածքային ԸՀ նիստերը եղել են բաց և կոնսենսուսային: Հակառակ օրենքով սահմանված պահանջներին, Տարածքային ԸՀ-ների որոշումների հանրային ցուցադրումը հետևողականորեն չի իրականացվել, տարածքային ԸՀ-ների որոշումները չեն հրապարակվել ԿԸՀ կայքում:

ՏԸՀ-ները յուրաքանչյուր ընտրության համար կազմվող ժամանակավոր մարմիններ են՝ բաղկացած խորհրդարանական խմբակցությունների, ինչպես նաև տարածքային ԸՀ -ների կողմից ընտրված յոթ անդամներից: Այս ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր ՏԸՀ կազմված է եղել յոթից ութ անդամներից, որոնցից երկուսն առաջադրվել են համապատասխան տարածքային ԸՀ-ի և երկուական ներկայացուցիչ՝ արձակված խորհրդարանի երեք խմբակցությունների կողմից: Թեև ՏԸՀ-ների մեծ մասը ԿԸՀ օրացույցին համաձայն կազմվել էին մինչև հունիսի 2-ը, բազմաթիվ տարածքային ԸՀ-նեից պահանջվել է առաջադրել լրացուցիչ թեկնածուներ այն բանից հետո, երբ խորհրդարանական խմբակցությունները, մասնավորապես «Լուսավոր Հայաստանը», չեն առաջադրել բավարար թվով թեկնածուներ բոլոր ՏԸՀ-ների համար:[16] Համաձայն օրենքի, ՏԸՀ նախագահի և քարտուղարի պաշտոնները բաշխվել են արձակված խորհրդարանի խմբակցությունների միջև այն համամասնությամբ, որով վերջիններս ներկայացված են խորհրդարանում, այդպիդով իշխող կուսակցության համար ապահովելով ՏԸՀ ղեկավար պաշտոնների մեծ մասը:

ԿԸՀ-ն և բոլոր տարածքային ԸՀ-ները հետևել են իրենց կազմում յուրաքանչյուր սեռի առնվազն երկու ներկայացուցիչ ներառելու օրենքի պահանջին: ԿԸՀ յոթ անդամներից երեքը կանայք են (42 տոկոս)՝ ներառյալ նախագահի տեղակալը: Տարածքային ԸՀ-ների մակարդակում 266 անդամից 94–ը կանայք են (35 տոկոս), որոնցից միայն մի քանիսը որոշում կայացնողների պաշտոններում՝ ներառյալ երկու հանձնաժողովի նախագահ (հինգ տոկոս) և վեց հանձնաժողովի նախագահի տեղակալ (16 տոկոս): Անհրաժեշտ է մշակել տարածքային ԸՀ-ների կազմի ըստ սեռի տարանջատված տվյալները, որոնք, հակառակ միջազգային չափանիշների, հասանելի չեն:[17] ԿԸՀ-ն չի հրապարակել ըստ սեռերի տարանջատված ՏԸՀ անդամների կազմի մասին տեղեկատվություն:

---

16 Նախքան ընտրությունները հրապարակված ՏԸՀ անդամների ցուցակներում նշված չի անդամների կուսակցական պատկանելիությունը:

17 Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի (CEDAW) Թիվ 23 ընդհանուր հանձնարարականի հոդված 48դ-ը պահանջում է ազգային կուսակցություններից ապահովել ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալներ, որոնք ցույց են տալիս այդ իրավունքներից օգտվող կանանց թվի հարաբերակցությունը տղամարդկանց թվին:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

18 տարին լրացած բոլոր քաղաքացիներն ունեն ընտրելու ընրավունք՝ բացառությամբ ծանր հանցանքի համար ազատազրկվածները կամ դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչվածները: Մտավոր հաշմանդամության հիմքով ընտրելու իրավունքից զրկելը հակասում է միջազգային չափանիշներին:[18] Ընտրողների գրանցումը պասիվ է: Ընտրողների տվյալները ավտոմատ կերպով տրամադրվում են Բնակչության պետական ռեգիստրի կողմից: Բնակչության պետական ռեգիստրը վարում է ՀՀ Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչությունը, և այն ներառում է ՀՀ–ում միշտապես բնակվող ընտրելու իրավունք ունեցող բոլոր քաղաքացիներին: Հունիսի 13 դրությամբ ընտրողների ցուցակում գրանցված է եղել 2.577.172 ընտրող, ներառյալ զգալի թվով արտերկրում բնակվող ընտրողներ, ովքեր հաշվառված են ընտրողների ռեգիստրում, քանի որ պաշտոնապես ունեն Հայաստանի ռեզիդենտի կարգավիճակ:[19] Թեև ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի բոլոր զրուցակիցները համաձայն են, որ ընտրողների ցուցակում ներառվածների զգալի մասը արտերկրում են և հետևապես չեն կարող քվեարկել,[20] այնուամենայնիվ, մտահոգություն չեն հայտնել ընտրողների ռեգիստրի ճշգրտության վերաբերյալ:

Իրավական դաշտը նախատեսում է ընտրողների ցուցակների թափանցիկության և հասանելիության ապահովման միջոցների լայն շրջանակ՝ ցուցակների հանրային ցուցադրման և որոնելու ու ներբեռնելու հնարավորությամբ դրանց առցանց տեղադրման միջոցով: Նախնական ընտրողների ցուցակները հանրային վերահսկողության նպատակով փակցված են եղել ընտրատեղամասերում մինչև մայիսի 31-ի վերջնաժամկետը: Մինչև հունիսի 10-ը ընտրողները հնարավորություն են ունեցել դիմել ուղղումներ կատարելու, իրենց կամ այլ ընտրողների ցուցակում ընդգրկելու կամ ցուցակից հանելու համար:[21] Այն ընտրողները, ովքեր դուրս են մնացել ընտրացուցակից, ինչպես նաև նրանք, ովքեր գտնվել են բժշկական հաստատություններում կամ կալանավայրերում, հնարավորություն են ունեցել ներառվելու ընտրողների լրացուցիչ ցուցակում մինչև քվեարկության օրվա ավարտը:

Քվեարկության օրը ընտրողների նույնականացումը կատարվել է Ընտրողների

---

18 Ըստ ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվեցիայի (CRPD) 12-րդ և 29-րդ հոդվածների «Կուսակցությունները պետք է ընդունեն, որ հաշմանդամություն ունեցող անձիք կյանքի բոլոր ոլորտներում ունեն հավասար իրավունակություն» և ապահովեն նրանց «քվեարկելու և ընտրելու իրավունքը և հնարավորությունը»: CRPD 12 հոդվածի N1 հիմնական մեկնաբանության 48-րդ ենթակետը նշում է, որ անձի՝ որոշում կայացնելու կարողությունը չի կարող արդարացում լինել հաշմանդամություն ունեցող անձանց քվեարկելու և ընտրության իրավունքի իրացումը բացառելու համար:

19 ԱՎՎ-ն չի տրամադրել ընտրողների ցուցակների ըստ սեռերի տարանջատված տվյալներ, կամ նախնական ընտրողների ցուցակում արված ուղղումների մանրամասներ՝ այդ թվում նաև ընտրության օրը հասցեի ժամանակավոր փոփոխման վերաբերյալ տվյալներ:

20 Արտերկրում գտնվող քաղաքացիները չեն կարող ընտրել՝ բացառությամբ արտերկրում գտնվող դիվանագիտական և ռազմական անձնակազմի և նրանց ընտանիքիների

21 Այլ անձանց անունից դիմումները պետք է իրականացվեն նոտարական ծառայության միջոցով:

նույնականացման սարքերով (ԸՆՍ), որոնցում ներբեռնված է եղել տվյալ ընտրատեղամասի ընտրողների ցուցակի էլեկտրոնային պատճենը: Օրենքը պահանջում է որպեսզի ԿԸՀ-ն հրապարակի բոլոր ընտրատեղամասերի ընտրողների ստորագրված ցուցակների սկանավորված տարբերակները մինչև հունիսի 22-ը՝ հանրային վերահսկողության ապահովման նպատակով: Ըստ միջազգային չափանիշների և լավագույն փորձի, խորհուրդ է տրվում պահպանել տվյալների և ընտրողների անձնական տվյալների գաղտնիությունը՝ ընդհուպ նրանց քվեարկելու փաստի և քվեարկելու վայրի մասին տեղեկատվությունը,[22] ԺՀՄԻԳ ԸԴԱ բոլոր զրուցակիցները ողջունում են այս միջոցը, որպես թափանցիկության խթանման և ընտրական չարաշահումների կանխման արդյունավետ մեթոդ:

2021 թ. ապրիլի փոփոխությունները հստակեցնում են, որ ստորագրված ընտրողների ցուցակները պետք է հասանելի մնան մինչև ԿԸՀ-ի կողմից արդյունքների աղյուսակավորումը, կամ բողոքների առկայության դեպքում՝ մինչև դրանց մասով վճռի կայացումը: Այնուահանդերձ, ցուցակների հետ ծանոթացման կանոններին կամ գաղտնիության պարտավորություններին վերաբերող կոնկրետ անդրադարձ չկա:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Խորհրդարանական ընտրությունների համար կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից յուրաքանչյուրը կարող է ներկայացնել թեկնածուների մեկ համապետական փակ ցուցակ, որում ներառված են 80-ից 300 թեկնածու: Կին և տղամարդ ներկայացուցիչների թիվը պետք է լինի առնվազն 30 տոկոս՝ այն պահանջով, որ կուսակցության ցուցակի իրարահաջորդ յուրաքանչյուր եռյակում պետք է ներգրավված լինեն երկու սեռերի ներկայացուցիչներ:[23] Այս քվոտան ավելացել է ի համեմատ նախորդ ընտրությունների 25 տոկոսի:

Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրելու իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք: Այլ քաղաքացիություն ունեցող անձինք չեն կարող առաջադրվել որպես պատգամավոր (տե՛ս իրավական կարգավորումները):

---

22 Տես Վենետիկի հանձնաժողովի IV պարբերությունը Ընտրական հարցերի լավագույն փորձի օրենսգրքի մեկնաբանական հուշագիրը ընտրություններին մասնակցած ընտրողների ցուցակների հրապարակման վերաբերյալ (CDL-AD (2016) 028) և 10-րդ պարբերությունը՝ գաղտնիության իրավունքի վերաբերյալ ICCPR-ի 16-րդ ընդհանուր առաջարկները: Ընտրական հարցերով լավագույն փորձի օրենսգրքի4c կետը (CDL_AD(2002)023rev2-cor) նույնպես նշում է որ փաստացի քվեարկած մարդկանց ցուցակները չպետք է հրապարկվեն:

23 30 տոկոս սեռի քվոտան ընդունվել է 2016թ, , սակայն առաջին անգամ սկսել է գործել այս ընտրություններին՝ ընտրական օրենսգրքի անցումային դրույթներին համահունչ: Հիմնական պահանջը չի վերաբերում ցուցակի ազգային փոքրամանությունները ներկայացնող թեկնածուների հատվածին:

Դատավորները, դատախազները, ռազմական անձնակազմը, ոստիկանները և այլ քաղաքացիական ծառայողներ չեն կարող լինել թեկնածու: Թեկնածուների ցուցակը կարող է ներառել մինչև 30 տոկոս անկուսակցական անդամներ: Հակառակ 1990թ. Կոպենհագենի փաստաթղթի, օրենքը թույլ չի տալիս թեկնածուներին հանդես գալ անհատապես:[24]

Գործընթացը եղել է ներառական, ԿԸՀ-ն գրանցել է 22 կուսակցության և 4 դաշինքի թեկնածուների ցուցակներ:[25] Հունիսի 10-ի վերջնաժամկետից և մեկ կուսակցության ինքնաբացարկից հետո[26] մրցցակցությունը շարունակել են 25 ընտրական ցուցակներ՝ 2 498 թեկնածուներով, որոնցից 925-ը եղել են կանայք (37 տոկոս):[27] Բոլոր ցուցակները կազմվել են երկու սեռերի ներառվածության պահանջին համապատասխան, անգամ 39 թեկնածուների ինքնաբացարկից և գրանցման չեղարկումից հետո: Թեկնածուների ցուցակներից միայն երկուսն են գլխավորել կանայք: Մեկ դաշինք և երեք կուսակցություններ գրանցել են ընդհանուր, թվով 13 թեկնածու ազգային փոքրամասնությունների համար նախատեսված չորս մանդատի համար: Ընտրություններին մասնակցելու համար գրանցված կուսակցությունների և դաշինքների շարքում եղել են արձակված խորհրդարանում ներկայացված երեք կուսակցությունները,[28] ինչպես նաև կուսակցություններ և դաշինքներ փոխկապակցված պետության նախկին (1991-2008թթ. ընկած ժամանակահատվածի) ղեկավարների հետ:[29]

Բոլոր գրանցված կուսակցությունները և դաշինքները վճարել են 10 մլն. ՀՀ դրամ (մոտավորապես 15.700 ԵՎՐՈ) ընտրական գրավ: Ընտրական գրավը վերադարձվում է, եթե կուսակցությունը կամ դաշինքը խորհրդարանում մանդատներ է ստանում կամ ստանում է վավեր ձայների ավելի քան չորս տոկոսը:

---

24 1990թ. Կոպենհագենի փաստաթղթի 7.5 ենթակետը պարտավորեցնում է ԵԱՀԿ մասնակից երկրներին «Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ձգտել քաղաքական կամ հանրային պաշտոնի՝ անհատապես կամ որպես քաղաքական կուսակցության կամ կազմակերպության մաս, առանց խտրականության»:

25 12 տարբեր թեկնածուների ցանկերից քսանվեց թեկնածուի գրանցումը մերժվել է պահանջվող փաստաթղթերի բացակայության պատճառով՝ (i) վերջին չորս տարիների ընթացքում Հայաստանի քաղաքացիություն և կացություն վկայական (19 դեպք), (ii) հայերենի իմացության ապացույց (15 դեպք), ցուցակում ներգրավված լինելու թեկնածուի գրավոր համաձայնություն (8 դեպք), անձնագրի կամ նույնականացմանքարտի պատճեն (3 դեպք) և փաստաթղթերի կեղծում (2 դեպք):

26 «Հայոց Արծիվներ», «Միացյալ Հայաստան» կուսակցություն, հերթական համարը՝ 22:

27 Ընդհանուր թվով 35 թեկնածու հետ է կանչել իր դիմումը և 4 թեկնածուի գրանցում չեղարկվել է կեղծ փաստաթղթեր ներկայացնելու պատճառով:

28 «Քաղաքացիական պայմանագիր», «Լուսավոր Հայաստան» և «Բարգավաճ Հայաստան»:

29 Լևոն Տեր-Պետրոսյան («Հայ ազգային կոնգրես»), Ռոբերտ Քոչարյան («Հայաստան դաշինք»), Սերժ Սարգսյան
(«Պատիվ Ունեմ» դաշինք): Պարոն Սարգսյանն անձամբ այս ընտրություններում թեկնածու չէ:

ՔԱՐՈԶԱՐՇԱՐՇԱՎԻ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Օրենքին համապատասխան, այս արտահերթ խորհրդարանական ընտրությունների պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածը եղել է 12 օր՝ ի տարբերություն հերթական ընտրությունների համար սահմանված 35- ից 45 օրվա: Այս ընտրությունների քարոզարշավի պաշտոնական մեկնարկը տրվել է հունիսի 7-ին և ավարտվել է հունիսի 18-ին՝արգելելով քարոզարշավ քվեարկության և դրան նախորդող օրը:[30]

Ինչպես նախաքարոզչական շրջանում, այնպես էլ քարոզարշավի ընթացքում քաղաքական դիսկուրսում գերակայել է ազգային անվտանգությունը: Պատերազմի և COVID-19 համավարակի հետևանքով սրված տնտեսական վիճակը հաջորդ կարևոր հիմնախնդիրն է եղել: Քարոզարշավի ժամանակահատվածում բևեռացումը խորացել է՝ հասնելով որոշ մրցակիցների կողմից միմյանց հասցեին նսեմացնող և սադրիչ մեղադրանքների՝ հիմնահարցերի շուրջ քննարկումների մեջ ներգրավվելու փոխարեն:[31] ԸԴՄԱ դիտորդները զեկուցել են նախընտրական ժամանակահատվածում անհարդուժողականության, վիրավորանքի և խտրական հռետորաբանության մակարդակի աճի մասին: Մարդու իրավունքների պաշտպանը քննադատել է այդօրինակ հռետորաբանության կիրառումը և հորդորել մրցակիցներին, մասնավորապես ներկա առաջնորդներին (կամ պաշտոնյաներին), ինչպիսին վարչապետն է, զերծ մնալ նմանօրինակ խոսքի կիրառումից:[32] ԿԸՀ-ն ևս կոչ է արել մրցակիցներին խուսափել նման հռետորաբանությունից: [33]

Հիմնարար իրավունքները, ինչպիսիք են հավաքների ազատության իրավունքը, քարոզարշավի ամբողջ ընթացքում հիմնականում երաշխավորվել են, և մրցակիցները կարողացել են ազատորեն քարոզարշավ իրականացնել երկրի ամբողջ տարածքում:[34] Թեև ընտրողներն ունեցել են կուսակցությունների և դաշինքների լայն ընտրություն, քարոզարշավի ընթացքում ամենատեսանելին եղել են վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի

---

30 Քարոզարշավի լռության ժամանակահատվածից առաջ հրապարակված քարոզարշավին վերաբերող բովանդակությունը կարող է մնալ առցանց (Ընտրական օրենսգիրք, հոդված 19):

31 ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երկարաժամկետ դիտորդների կողմից դիտարկված բոլոր հանրահավաքներին (հունիսի 8՝ Աշտարակ, հունիսի 11 Երևան, հունիսի 12՝ Տաշիր և Վանաձոր) նախկին նախագահ Քոչարյանը մեղադրել է ներկա Վարչապետին դավաճան և խելագար լինելու մեջ ու նշել որ նա պետք է լքի երկիրը: Վարչապետ Փաշինյանը մեղադրել է նախկին նախագահին՝«հանցավոր խմբի» մաս լինելու մեջ, և սպառնացել է «կոտրել ոհմակի ատամները», սպառնացել է «կաղրային ջարդով» ու ասել է, որ կլինի վենդետա նախկին կառավարության և նրա դաշնակիցների նկատմամբ (Թալինում հունիսի 8-ին ՔՊ հանրահավաքի ժամանակ):

32 Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2021թ. մայիսի 31-ի հայտարարությունը:

33 ԿԸՀ-ն կոչ է արել կողմերին ձեռնպահ մնալ նման հռետորաբանությունից:

34 Հունիսի 16-ին Եղեգնաձորում «Քաղաքացիական պայմանագրի» հանրահավաքի ընթացքում ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները ականատես են եղել ոստիկանության կողմից «Հայաստան» դաշինքի հինգ աջակիցների բռնի ձերբակալմանը: Ավելի ուշ հինգը ձերբակալվածներին ազատ են արձակվել, սակայն մեկի մոտ տեսանելիեն եղել ֆիզիկական վնասվածքների հետքեր:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի «Հայաստան» դաշինքը: Քարոզարշավի ուղերձները եղել են ագրեսիվ՝ մի կողմից նախկին նախագահի դեմ կոռուպցիայի մեղադրանքներով, մյուս կողմից ներկա վարչակազմի այսպես կոչված ձախողումների քննադատությամբ՝ մասնավորապես կապված պատերազմի հետ: Որոշ տեղամասերի մոտ քվեարկության օրը և դրա նախօրեին նկատվել են պարոն Քոչարյանին ուղղված բացասական քարոզչական նյութեր:

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երկարաժամկետ դիտորդները նշել են, որ երկրի ողջ տարածքում իրականացվել է քարոզչական գործունեություն: Բազմաթիվ դիտարկված միջոցառումների ժամանակ չեն պահպանվել COVID19 համավարակի դեմ կառավարության կողմից սահմանվածմիջոցառումները: Այս քարոզարշավի համար հատկանշական են եղել քայլերթերը, ավտոերթերը, դռնեդուռ քարոզչությունը, հանրային հանդիպումները, հանդիպումները հատուկ խմբերի հետ, ինչպես նաև լրատվամիջոցներով և հեռուստատեսությամբ սոցիալական գովազդների համատարած շրջանառումը: Մրցակիցների շրջանում նաև լայնորեն տարածված է եղել քարոզարշավի ընթացքում գովազդային վահանակների և պաստառների օգտագործումը՝ այդ թվում այն վայրերում, որոնք ԿԸՀ-ն հավասար հիմունքներով հատկացրել էր մրցակիցներին վճարովի գովազդի համար: Կուսակցությունները և դաշինքները զգալի անհանգստություն են արտահայտել՝ կապված քարոզարշավի ընթացքում պաստառներ և գովազդային վահանակներ վնասելու հետ, սակայն որևէ պաշտոնական բողոք չի արձանագրվել:[35] Չնայած 30 տոկոս քվոտային, քարոզարշավի միջոցառումներում կանայք ակնհայտորեն մղվել են հետին պլան՝ հազվադեպ ելույթներով:[36] Քարոզարշավի ընթացքում ակնհայտորեն բացակայել են կանանց և ազգային փոքրամասնություններին թիրախավորող ուղերձները:

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցները և ԶԼՄ-ները քննադատել են վարչապետ Փաշինյանին՝ տեղական համայնքների հետ հանդիպումներում ընտրական ուղերձներ հղելու և դեպի մարզեր իր աշխատանքային այցերը կուսակցության տեղական գրասենյակ այցելելու համար օգտոգործելու կապակցությամբ: Թեև այս միջոցառումները չեն պիտակավորվել որպես քարոզարշավի միջոցառումներ, դրանք ներառել են քարոզչական ուղերձներ և նյութեր,

---

35 «Պատիվ Ունեմ» դաշինքը զեկուցել է Երևանում և Արագածոտնի մարզում երկու դեպքի մասին, սակայն ոստիկանությանը կամ ԿԸՀ-ին պաշտոնական բողոք չի ներկայացրել՝ նշելով արագ արձագանքման հետ կապված վստահության բացակայությունը և ժամանակի սղությունը: Սակայն մինչև հունիսի 19-ը դատախազը ստացել է քարոզչական նյութերին գույքային վնասի հասցման դեպքերի 42 հաղորդում: ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները հայտնել են պարոն Քոչարյանի գիրքը գովազդող վահանակները Վայոց Ձոր, Տավուշ և Լոռի մարզերում վնասելու դեպքերի մասին, թեև վերջիններս պաշտոնապես չեն համարվել քարոզչության նյութեր: Պրն. Տիգրան Արզաքանցյանի հիմնադրամի ցուցապաստառները վնասվել են Լոռվա մարզում:

36 Դիտարկված հանրահավաքների ընթացքում 153 ելույթ ունեցողներից միայն 24-ն են եղել կանայք (16 տոկոս), իսկ դիտարկված քարոզչական 73 միջոցառումներից 51-ում (70 տոկոս) կանայք ելույթ չեն ունեցել:

ինչպիսիք են ՔՊ պատկերանշանով ցուցապաստառները:[37] Ընտրական օրենսգիրքը սահմանափակում է քաղծառայողների և պետական պաշտոնյաների կողմից քարոզչության իրականացումը ոչ աշխատանքային ժամերին, սակայն հստակ չի սահմանում աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերը: Պետական գործչի կողմից այցերը կուսակցության գրասենյակներ աշխատանքային ժամերին, կամ կառավարության գրասենյակներ՝ քարոզարշավ իրականացնելիս, ոչ հստակ են դարձնում իշխող կուսակցության և պետության բաժանման սահմանը:[38]

ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները դիտարկել են դեպքեր, երբ մրցակցող ուժերի հետ կապված մասնավոր և հանրային ոլորտի գործատուները ճնշում են գործադրել իրենց աշխատակիցների նկատմամբ, որպեսզի վերջիններս մասնակցեն քարոզարշավի միջոցառումներին: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ստացել է նաև ընտրակաշառքի հնարավոր դեպքերի մասին հաղորդումներ՝ մասնավորապես կապված խոշոր կուսակցությունների հետ, իսկ թեկնածուներից երեքի նկատմամբ քարոզարշավի ընթացքում ընտրակաշառքի մեղադրանքով վարույթներ են բացվել:[39] Քարոզարշավի ողջ ընթացքում եղել են նաև վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ մեղադրանքներ, որոնք սակայն չեն արժանացել պատշաճ արձագանքի:[40]

Քարոզարշավի լռությունը հիմնականում պահպանվել է, սակայն «Պատիվ ունեմ» դաշինքի բողոքին հետևելով՝ ԿԸՀ-ն նախազգուշացում է արել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու Նիկոլ Փաշինյանին ընտրությանը նախորդող օրը քարոզ իրականացնելու համար:[41]

Քարոզարշավի ֆինանսավորում

Քարոզարշավի ֆինանսավորումը գլխավորապես կարգավորվում է Ընտրական օրենսգրքով

---

37 ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները Վանաձորում մայիսի 30-ի դրությամբ (մայիսի 30-ին) հանդիպել են կուսակցական պաստառների, ինչպես նաև ավելի քան 20 այլ միջոցառումների ժամանակ դիտարկված կուսակցությունների պաստառները դրված են եղել թեկնածուների ֆեյսբուքյան էջերում:

38 Վարչապետի պաշտոնակատար Փաշինյանը պաշտոնական արձակուրդ է վերցրել հունիսի 7-ից 18-ը ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև արշավին մասնակցող կառավարության նախարարները, մարզպետները և պետական պաշտոնյաները:

39 Հունիսի 8-ին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության թեկնածուն Գեղարքունիքի մարզում ձերբակալվել է ընտրակաշառք առաջարկելու համար: Հունիսի 11-ին Արմավիրի նախկին մարզպետը, ով հանդես է
գալիս որպես «Պատիվ Ունեմ» դաշինքի թեկնածու ևս ձերբակալվել է Արմավիրի մարզում: Հունիսի 18-ին Երևանի Զեյթուն համայնքում ընտրակաշառքի մեղադրանքով ձերբակալվել է «Պատիվ Ունեմ» դաշինքի թեկնածուն: Ձերբակալված երեք թեկնածուներից բացի, ընտրակաշառքի մեղադրանքով 14 գործերով հարուցվել են հետաքննություններ:

40 Տես ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի Ընտրական քարոզարշավի ընթացքում վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերի կանխման և արձագանքման մասին համատեղ ուղեցույցը:

41 Պարոն Փաշինյանը իր ֆեյսբուքյան էջում ուղերձ է հրապարակել ընտրության նախորդող որը՝ կոչ անելով քաղաքացիներին քվեարկել:

և «Կուսակցությունների մասին» օրենքով:[42] Նախորդ ընտրություններում առնվազն երեք տոկոս քվե ստացած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները ստանում են տարեկան պետական ֆինանսավորման իրավունք, սակայն քարոզչության ծախսերի ուղղակի պետական ֆինանսավորում չի նախատեսվում:[43] Ընտրություններին մասնակցող կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները պարտավոր են բացել հատուկ բանկային հաշիվ քարոզչության ֆինանսավորման գործարքների համար:[44] Քարոզարշավը կարող է ֆինանսավորվել ընտրողների նվիրատվությունների, ինչպես նաև թեկնածուների մուծումների և քաղաքական կուսակցությունների փոխանցած միջոցներով:[45] Առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններից, ինչպես նաև օտարերկրյա և անանուն աղբյուրներից մուծումները չեն թույլատրվում:[46] Ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի քարոզչական ծախսերի օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափը կազմում է մինչև 500 միլիոն ՀՀ դրամ (մոտ՝ 788 000 եվրո):

Թեև քարոզչության ֆինանսավորման կարգավորումները մանրամասն են մի շարք թերություններ թույլ են տալիս շրջանցել իրավական դրույթները: Օրինակ, չնայած ԺՀՄԻԳ-ի վաղուց ներկայացված հանձնարարականների, քարոզարշավի ծախսերի իրավական սահմանումը չի ներառում կազմակերպչական ծախսերը, ինչպիսիք են գրասենյակային տարածքի, տրանսպորտի, կապի և քարոզչական անձնակազմի ծախսերը՝ մրցակիցներին հնարավորություն տալով օգտագործել այդ ծախսերը որպես ծախսերի սահմանաչափը շրջանցելու միջոց: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նկատել է, որ որոշ կուսակցություններ քարոզարշավի ծախսերի սահմանները շրջանցելու համար օգտագործում են բարեգործական կազմակերպություններ և անձնական հրապարակայնությունը:[47] Չնայած

---

42 Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը ընդունվել է 2020թ. դեկտեմբերին, ի թիվս այլ կարգավորումների կուսակցությունների և քարոզարշավի ֆինանսավորման մասով: Ընտրական օրենսգրքում 2021թ. մայիսին կատարված փոփոխությունների հետ միասին, այս փոփոխված դրույթներն անդրադարձել են նաև նախկինում արտահայտված որոշ մտահոգությունների՝ ընդլայնելով քարոզարշավի ծախսերի սահմանումը և ֆինանսական վերահսկողության գործառույթները ԿԸՀ-ից փոխանցելով Հակակոռուպցիոն հանձնաժողովին: Այս փոփոխություններն օրինական ուժի մեջ կմտնեն 2022 թվականից:

43 2018թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքների հիման վրա պետական բյուջեից ֆինանսավորում են ստանում հետևյալ կուսակցություններն ու դաշինքները. «Իմ Քայլը», «Բարգավաճ Հայաստան», «Լուսավոր Հայաստան», «Հայաստանի Հանրապետական Կուսակցություն» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն»:

44 Նախընտրական հիմնադրամ չստեղծելու փաստը հիմք է հանդիսանում, որպեսզի ԿԸՀ-ն դիմի Վարչականդատարան՝ մասնակցի գրանցումը անվավեր ճանաչելու համար:

45 Մուծումների օրենքով սահմանված սահմանաչափն է՝ 500000 դրամ (մոտ՝ 790 եվրո) ընտրողների, 5 միլիոն դրամ (մոտ՝ 7900 եվրո) թեկնածուների և 100 միլիոն դրամ (մոտ՝ 157 000 եվրո) մրցակիցների համար: 1 եվրոն կազմում է մոտավորապես 635 դրամ:

46 Արգելված աղբյուրներից ստացված, ինչպես նաև սահմանաչափը գերազանցող մուծումները փոխանցվում են պետական բյուջե:

47 Եղել է ընկալում, որ «Տիգրան Արզաքանցյան» հիմնադրամն աշխատել է Դեմոկրատական կուսակցության (ԴԿ) տեսանելիության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես Երևանում և Տավուշի մարզում: ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները նաև զեկուցել են Արագածոտնի մարզում ԴԿ-ի կողմից հիմնադրամի տարածքների օգտագործման մասին: «Քաղաքացիական Պայմանագիրը» և «Լուսավոր Հայաստանը» նաև հայտնել են վանդալիզմի մի քանի դեպքերի մասին: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն դիտարկել է նախկիննախագահ Ռոբերտ Քոչարյանի գիրքը գովազդող գովազդային վահանակների առկայություն

«Կուսակցությունների մասին» փոփոխված օրենքը արգելում է առևտրային սուբյեկտների կողմից մուծումները կուսակցությունների հիմնադրամներ և նախատեսում է համապատասխան պատժամիջոցներ, ԺՀՄԻԳ-ի որոշ զրուցակիցներ նշել են, որ արգելքը կարող է շրջանցվել՝ խոշոր ընկերությունների նվիրատվությունները անհատ քաղաքացիների միջոցով որպես ավելի փոքր մուծումներ քարոզարշավի հիմնադրամներ փոխանցելու միջոցով: Թեև իրավական կարգավորումների վերջին փոփոխություններով ներմուծվել են նոր պատժամիջոցներ, քարոզարշավի ֆինանսավորման կանոնների խախտումների քրեական և վարչական պատասխանատվություն նախատեսող անհրաժեշտ փոփոխությունների մեծ մասն ուժի մեջ կմտնի միայն 2022թ.:

ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (ՎՎԾ) վերահսկում է մրցակցող կուսակցությունների և դաշինքների կողմից քարոզչության ֆինանսավորումը կարգավորող օրենսդրության պահպանումը: ՎՎԾ-ն հրապարակել է յուրաքանչյուր մրցակցող կուսակցության/դաշինքի մուծումների և ծախսերի ընդհանուր գումարի մասին ամփոփ

տվյալներ և տեղադրել է վերջիններիս նախընտրական ֆինանսական հաշվետվություններն առցանց՝ այդպիսով նպաստելով ֆինանսական թափանցիկությանը: Երկրորդ ֆինանսական հաշվետվությունները պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան ԿԸՀ կողմից ընտրությունների արդյունքների ամփոփումից երեք օր առաջ:

Լրատվամիջոցներ

Մեդիա միջավայրը բազմազան է և ներառում է 50 հեռարձակողներ, այդ թվում վեցը հեռուստաալիք և երկու ռադիոկայան համապետական ծածկույթով, 35-ը գերազանցող պարբերական տպագիր հրատարակություններ և ավելի քան 200 առցանց լրատվական պորտալներ:48 Առցանց աղբյուրների և սոցիալական ցանցերի՝ մասնավորապես ֆեյսբուքի դերն արագորեն աճում է, և դրանք վերածվել են քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարևոր հարթակներ: Այնուհանդերձ, հեռուստատեսությունը մնում է քաղաքական տեղեկատվության ամենակարևոր աղբյուրը՝ հատկապես մայրաքաղաքից դուրս: Հանրային հեռուստաընկերությունը, որը ֆինանսավորվում է պետական բյուջեից, շարունակում է ընկալվել որպես կառավարամետ խմբագրական քաղաքականությամբ լրատվական: Միևնույն ժամանակ, ԸԴՄԱ-ի զրուցակիցներն ընդգծել են մասնավոր հեռարձակողների քաղաքական պատկանելության հետ կապված երկարամյա մտահոգությունները:

բոլոր մարզերում: Այս լայնորեն տարածված հրապարակայնությունը բարձրացրել է Ռոբերտ Քոչարյանի տեսանելիությունը, սակայն չի խոչընդոտել մյուս մասնակիցների՝ իրենց վճարովի գովազդայինվահանակները ԿԸՀ-ի կողմից հատկացված տեղերում տեղադրելու հնարավորությանը:

48 Հեռարձակողների քանակը տրամադրվել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (ՀՌՀ) կողմից, իսկ տպագիր և առցանց լրատվամիջոցների քանակը ներկայացված է Այրեքս-ի «Մեդիա կայունության ինդեքս 2019: Հայաստան» զեկույցում:

Խոսքի ազատությունը երաշխավորված է Սահմանադրությամբ, և միջազգային կազմակերպություններն այս առումով բարելավումներ են նկատել 2018թ. ի վեր: Զրպարտությունը ապաքրեականացվել է 2010թ., սակայն Քաղաքացիական օրենսգրքի 2021թ. փոփոխությամբ եռապատկվել է վիրավորանքի և զրպարտության համար նյութական վնասի հատուցման առավելագույն չափը:[49] ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցները ընդգծել են կոշտ, անհանդուրժող և սադրիչ հռետորաբանության աճող ծավալը քաղաքական ասպարեզում: Քաղաքական միջավայրը, որում տարբեր կարծիքները պարբերաբար բախվում են ատելության և կշտամբանքի, մասնավորապես սոցիալական ցանցերում, բացասաբար է ազդում հանրային դիսկուրսի վրա:[50] Բացի այդ, վերջին շրջանում իրենց մասնագիտական պարտականությունները կատարող լրագրողների նկատմամբ ֆիզիկական ոտնձգության մի շարք դեպքերը հարցեր են առաջացնում ազատության հանդեպ հարգանքի առումով:[51]

Հունիսի 1-ին, օրենքին համապատասխան, ԿԸՀ-ն հանրային վիճակախաղի միջոցով յուրաքանչյուր մրցակցող կուսակցության կամ դաշինքի տրամադրել է 30 րոպե անվճար եթերաժամանակ հանրային հեռուստատեսությամբ և 60 րոպե՝ հանրային ռադիոյով՝ երկուսն էլ փրայմ-թայմի ընթացքում: Բացի այդ, յուրաքանչյուր մրցակցող կուսակցություն կամ դաշինք իրավունք է ունեցել գնել մինչև 60 րոպե հանրային հեռուստատեսությամբ, և մինչև 90 րոպե հանրային ռադիոյով: Մասնավոր 22 հեռարձակողներ, այդ թվում՝ 12 մարզային հեռարձակողներ, մրցակիցներին վճարովի գովազդներ գնելու հնարավորություն են ընձեռել:[52]

Օրենքի համաձայն, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՌՀ) վերահսկում է բոլոր հեռարձակողներին պաշտոնական քարոզարշավի ընթացքում, նաև լրատվամիջոցների սեփական մշտադիտարկման միջոցով:[53] Որպես ողջունելի քայլ՝ ՀՌՀ-ն մեկնաբանել է Ընտրական օրենսգրքի «անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն» տրամադրելու պահանջն այնպես, որ տարբեր կուսակցությունների և

---

49 Տես՝ տեղական տասը ԶԼՄ-ների և իրավապաշտպան կազմակերպությունների հայտարարությունը, որում նրանք քննադատում են այն փոփոխությունը: Նախագահը փոփոխություններն ուղարկել է Սահմանադրական դատարան՝ վերանայման համար:

50 Ապրիլի 14-ին հայաստանյան լրատվական ՔՀԿ-ները դատապարտել են սպառնալիքները և վիրավորանքները լրագրողների հասցեին:

51 Խոսքի ազատության պաշտպանության հանձնաժողովի ապրիլի 23-ի զեկույցները և ՀԺՄ-ի մայիսի 11-ի, մայիսի 31-ի և հունիսի 3-ի զեկույցներում նշվել է ArmNews TV / tert.am կայքի, 5-րդ ալիքի, 168.am կայքի և «Հրապարակ» թերթի լրագրողների աշխատանքի խոչընդոտման և ֆիզիկական հետապնդման դեպքերի մասին:

52 Քաղաքական սուբյեկտները կարող են նաև քաղաքական գովազդ տեղադրել մասնավոր ԶԼՄ-ներում (ինչպես հեռարձակվող, այնպես էլ տպագիր), ներառյալ նախքան քարոզչության պաշտոնական ժամանակահատվածի մեկնարկը:

53 Հիմնվելով իր սեփական մեթոդաբանության վրա, որը հրապարակայնորեն հասանելի է իր կայքում, ինչպես նաև ԿԸՀ կայքում, ՀՌՀ- ն վերահսկում է ընդհանուր առմամբ 38 հեռարձակողի: Այն հիմնականում կենտրոնացած է անվճար և վճարովի եթերաժամանակին վերաբերող պահանջների պահպանման վրա, և չի իրականացնում լուրերի լուսաբանման տոնայնության գնահատում:

դաշինքների ընձեռնվի ավելի ընդգրկուն լուսաբանման հնարավորություն, այլ ոչ թե յուրաքանչյուր մասնակցին հավասար քանակի լուսաբանում տրամադրելու ֆորմալիստական շեշտադրմամբ: Հունիսի 16-ին կարգավորիչը թողարկել է իր մշադիտարկման առաջին զեկույցը, որում որևէ լուրջ օրինախախտումներ նշված չեն եղել:

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն լրատվամիջոցների իր մշտադիտարկումը սկսել է մայիսի 24-ին՝ յոթ հեռուստաալիքների, մեկ ռադիոկայանի և երեք առցանց լրատվամիջոցների քանակական և որակական վերլուծությամբ:[54] Պաշտոնական քարոզարշավի մեկնարկից առաջ և հետո լրատվամիջոցների կողմից քաղաքական զարգացումների լուսաբանման մեջ նկատելի տարբերություններ են եղել: Դիտարկվող հեռարձակողները, մասնավորապես Հանրային հեռուստաընկերությունը, նվազեցրել են ներկայիս կառավարության և վարչապետի պաշտոնակատարի վերաբերյալ իրենց լուսաբանումը, լուսաբանումը հիմնականում նվիրելով մրցակցող կողմերին և դաշինքներին: Ընտրություններին վերաբերող հեռուստատեսային բովանդակության զգալի մասը կազմել են քարոզչական գովազդները, հաճախ նաև բացասական քարոզչությունը, հատկապես ՀԴ- ի կողմից:

Հանրային Հ1-ի եթերում կառավարությանը նվիրված լուսաբանումների մասնաբաժինը նվազել է 66-ից 4 տոկոսով՝ մեծապես դրական կամ չեզոք տոնայնության պահպանմամբ: Հանրային Հ1-ը լուսաբանել է բոլոր մասնակիցներին ընդհանուր առմամբ համեմատելի կերպով՝ լուսաբանման ամենամեծ (12 տոկոս) մասը տրամադրելով «Քաղաքացիական պայմանագր»-ին, որին 11 տոկոսով հաջորդում է «Հայ ազգային կոնգրեսը», 8 տոկոսով «Հայաստան Դաշինքը» և 7 տոկոսով «Պատիվ ունեմ» դաշինքը: Լուսաբանումը հիմնականում դրական և չեզոք տոնով է եղել, և, ընդհանուր առմամբ, խուսափել է կոշտ հռետորաբանությունից: Հանրային հեռուստատեսությունը հետևել է անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու պահանջին:[55] Հեռուստաալիքը եթեր է հեռարձակել նաև բազմաթիվ ընտրական բանավեճեր և հարցազրույցներ, այդ թվում մրցակցող կողմերի և դաշինքների ղեկավարների երկու բանավեճ ուղիղ եթերում:[56] Այնուամենայնիվ մրցակից կուսակցությունների և դաշինքների առաջնորդների կեսից ավելին հրաժարվել են մասնակցել հեռուստաընկերության եզրափակիչ երկու բանավեճերին, ինչը բացասաբար է անդրադարձել նրանց տեղեկատվական արդյունավետության վրա: Մի քանի ընդդիմադիր

---

54 ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն իրականացնում է համապետական ծածկույթ ունեցող հեռուստաալիքների՝ Հ1 (հանրային հեռուստատեսություն), ATV, Արմենիա TV, Կենտրոն TV, Շանթ TV և Երկիր Մեդիաի, ինչպես նաև Երևանում գործունեություն իրականացնող Արմնյուզ հեռուստաալիքների փրայմ թայմի ժամանակահատվածում հեռարձակումների մոնիթորինգ: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն իրականացնում է նաև Հանրային ռադիոյի, ինչպես նաև www.azatutyun.am (RFE/RL հայլեզու մասնաճյուղ), www.news.am և www.1in.am առցանց լրատվամիջոցների քաղաքական բովանդակությամբ հոդվածների մշտադիտարկում:

55 Բոլոր 25 մրցակցող կողմերն ու դաշինքները օգտվել են անվճար եթերաժամանակից հանրային հեռուստատեսությամբ (13-ը՝ հանրային ռադիոյով), մինչդեռ 20-ը վճարովի գովազդներ են տեղադրել հանրային հեռուստատեսությունում (6-ը՝ հանրային ռադիոյով):

56 Azatutyun.am- ը, մի շարք տարածաշրջանային և առցանց լրատվամիջոցներ (ALT TV, Factor TV, Lori TV, Sevan TV և Tsayg TV) և մեկ տեղական ՔՀԿ (Media Dialogue center) նույնպես բանավեճեր են կազմակերպել:

կուսակցություններ բողոքել են Հ1-ի կողմից ընտրությունների լուսաբանման տարբեր դրսորումներից, ներառյալ իշխող կուսակցության և դրա աջակիցների հասցեին քննադատություն պարունակող վճարովի գովազդային նյութերի խմբագրումը[57] և մերժումը, ինչպես նաև բանավեճի կարգի սահմանման միջոցները:[58]

Պաշտոնական քարոզարշավի ընթացքում որոշ մասնավոր հեռարձակողներ, մասնավորապես՝ «Շանթ» հեռուստաընկերությունը, տեսանելի ջանքեր են գործադրել մրցակիցների մեծ մասին հիմնականում անկողմնակալ կերպով լուսաբանելու ուղղությամբ՝ նպաստելով հասանելի տեղեկատվության բազմազանությանը և ընտրողների՝ տեղեկացված ընտրություն կատարելու հնարավորությանը: «Շանթ» հեռուստաընկերությունը տրամադրել է տրամադրել է իր քաղաքական լուսաբանման 11 տոկոսը «Հայաստան» դաշինքին և 10 տոկոսը՝

«Քաղաքացիական պայմանագրին»: Լուսաբանման տոնայնությունը եղել է չեզոք կամ դրական: Ի տարբերություն վերոնշյալի, «Արմնյուզ» լրատվական հեռուստաալիքը հաճախ ներկայացրել է միակողմանի և կողմնակալ քննադատական լուսաբանում կառավարող իշխանություններիև ՔՊ-ի հասցեին՝ նաև լրագրողների կողմից հնչեցրած նվաստացուցիչ հայտարարություններով:

Այնուհանդերձ, այն հեռուստաալիքները, որոնք ընկալվում են որպես բացահայտորեն կապված որոշակի կուսակցությունների հետ, այդ մասնակիցների նկատմամբ արտոնյալ վերաբերմունք են ցուցաբերել: Օրինակ՝, «Երկիր Մեդիան» հատկացրել է իր լուսաբանման 36 տոկոսը մեծապես դրական կամ չեզոք տոնայնությամբ «Հայաստան» դաշինքին:

ԲՈՂՈՔՆԵՐ և ԴԻՄՈՒՄՆԵՐ

Ընտրական օրենսգրքի համաձայն, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս

---

57 «Հայաստան» դաշինքը հունիսի 8-ին և « Պատիվ Ունեմ» դաշինքը հունիսի բողոքներ են ներկայացրել ՀՌՀ-ին՝ հանրային հեռուստատեսության եթեր հեռարձակվող հիմնական քաղաքական բանավեճի հաղորդավարի կողմնակալ վարքագծի վերաբերյալ: Հունիսի 12-ին «Պատիվ Ունեմ» դաշինքը հրապարակավ բողոքել է իր գովազդային նյութերին խմբագրական միջամտության երկու դեպքերի մասին `իբր վարկաբեկիչ լեզվի պատճառով: Հունիսի 17-ին հանրային հեռուստատեսությունը վերանայել է մեկ նյութի մերժումը և կուսակցությանը տրամադրել է այլընտրանքային ցուցադրության հնարավորություն:

58 Մի քանի կուսակցություններ բողոքել են ամփոփիչ հեռուստաբանավեճերի ընտրության չափանիշների դեմ, իսկ յոթը նախընտրել են չմասնակցել: Բանավեճերը, որոնք ցուցադրվել են հունիսի 16-ին և 17-ին, կուսակցությունների և դաշինքների համադրումը կատարել են հիմք ընդունելով կուսակցությունների գրանցման ամսաթիվը, որի արդյունքում, ըստ այդ կուսակցությունների, իրենք զրկվել են իշխող կուսակցությանը հարցեր առաջադրելու հնարավորությունից: Հունիսի 18-ին «Հայ ազգային կոնգրեսը» վարչական դատարան բողոք է ներկայացրել առաջնորդների բանավեճերի ընտրության չափանիշների վերաբերյալ:

հանձնաժողովներում, իսկ ԿԸՀ-ի դեմ բողոքները ընդդատյա են վարչական դատարանին:[59] Օրենքը թույլ է տալիս ընտրական հանձնաժողովի որոշումների և գործողությունների դեմ բողոքները ներկայացվել նաև դատարաններ, սակայն զուգահեռ դատական և վարչական բողոքարկման դեպքերում առաջնությունը տրվում է դատական գործընթացին: Ըստ վարչական դատարանի, դիմումատուները պետք է սպառեն ընտրությունները կազմակերպող և իրականացնող մարմնի կողմից տրամադրվող բոլոր իրավական պաշտպանության միջոցները նախքան դատարան դիմումներ ներկայացնելը:[60] Որոշ բացառություններով, բողոքներ և դիմումներ ներկայացնելու իրավունքը սահմանափակվում է անձնական ընտրական իրավունքների հնարավոր խախտումներով:[61] 2021թ. ապրիլի 8-ին դիտորդական կազմակերպություններից մեկը վիճարկել է Ընտրական օրենսգրքի այն դրույթի սահմանադրականությունը, որը չի տալիս հանրային շահից բխող բողոքարկման իրավունք:[62]

Մինչև քվեարկության օրը ԿԸՀ-ն ստացել է 22 բողոք, ինչպես նաև մի շարք ոչ պաշտոնական դիմումներ և տեղեկատվության հարցումներ: Բողոքների վերաբերյալ

քննարկումները եղել են բաց և կոլեգիալ, բոլոր մասնակիցները հնարավորություն են ունեցել արտահայտելու իրենց տեսակետները և որոշումները տեղադրվել են համացանցում պաշտոնական վերջնաժամնետների պահպանմամբ: Դիմումատուներից շատերը պնդել են, որ տեղի են ունեցել կոպիտ հռետորաբանության և ատելության խոսքի կիրառման հիմքով քարոզարշավի խախտումներ և պահանջել են չեղյալ համարել որոշ թեկնածուների ցուցակների և առանձին թեկնածուների գրանցումը: Մինչ բողոքների մեծ մասը մերժվել է իրավական հիմնավորվածության բացակայության պատճառով, ԿԸՀ-ն շեշտել է, որ անհատական քարոզչական ելույթների գնահատումը իր իրավասությունների մեջ չէ, և ընտրական օրենսգիրքը չի նախատեսում նման գնահատման չափանիշներ: Մինչև քվեարկության օրը ԿԸՀ ներկայացված 22 բողոքներից 4-ը եղել են հնարավոր վարչական ռեսուրսների չարաշահման առնչությամբ:[63] Դրանք մերժվել են բողոքարկողների՝ բողոք

---

59 Ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ բողոքները կարող են ներկայացվել ԱՎՎ, որիորոշումն էլ կարող է բողոքարկվել շրջանային դատարանում:

60 Գործնականում դա նշանակում է, որ միայն ԿԸՀ որոշումների դեմ բողոքարկումներն են ընդդատյա դատականներին: Այնուհանդերձ, դա չի վերաբերում քվեարկության արդյունքների վերաբերյալ Տարածքային ԸՀ որոշումների բողոքարկմանը:

61 Ընտրողները, լրատվամիջոցների ներկայացուցիչները և դիտորդները կարող են բողոք ներկայացնել իրենց իրավունքների ոտնահարման վերաբերյալ, իսկ կուսակցությունների վստահված անձինք նհանձնաժողովի անդամները՝ ինչպես իրենց, այնպես էլ կուսակցությունների, թեկնածուների և շահառուների իրավունքների խախտումների վերաբերյալ:

62 Այս գործով դատաքննությունը նշանակված է 2021թ. հուլիսի 6-ին: Ընտրական օրենսգրքի բողոքարկման իրավունքին առնչվող դրույթները դիտորդներին իրավունք են տալիս բողոք ներկայացնել միայն իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ:

63 ԿԸՀ-ն նաև տեղեկացրել է նմանատիպ մտահոգությունների մասին՝ բողոք չպարունակող դիմումների տեսքով:

ներկայացնելու իրավունք չունենալու պատճառով, իսկ բողոքների բովանդակությունը միօրինակ գնահատական չի տրվել՝ հակառակ ԿԸՀ-ի օրենքով սահմանված պարտավորությանը:[64] COVID-19 համավարակի ընթացքում բողոքողների համար հասանելիություն ապահովելու համար ԿԸՀ-ն թույլ է տվել բողոքները և հայցադիմումները ներկայացնել էլեկտրոնային համակարգի միջոցով:[65]

Մինչև քվեարկության օրը վարչական դատարանը ստացել է 21 բողոք, այդ թվում բողոքներ պոտենցիալ թեկնածուների կողմից, ում մերժվել էր թեկնածուի գրանցման համար անհրաժեշտ կացության կամ քաղաքացիության վկայականների տրամադրումը, ինչպես նաև ԿԸՀ-ի՝ երեք թեկնածուների գրանցումը չեղյալ հայտարարելու որոշումների բողոքարկում:[66] Մի դեպքում վարչական դատարանը անվավեր է ճանաչել ԿԸՀ-ի որոշումները՝ հանելու նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի գիրքը գովազդող գովազդային վահանակները, որոնք ըստ ԿԸՀ-ի ասոցացվում էին քարոզարշավի հետ:[67] Եվս երեք մասնակիցներ բողոքարկել են իրենց գովազդային վահանակները հանելու վերաբերյալ ԿԸՀ-ի նմանատիպ որոշումները՝ սակայն այդ դիմումների բողոքարկման համար օրենքով սահմանված վերջնաժամկետից ուշ:[68] ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկված դատական նիստերն անցել են

թափանցիկ կերպով՝ բաց նիստերում, մասնակիցները պատշաճ կերպով իրազեկված են եղել նիստերի ժամանակի և վայրի մասին և հնարավորություն են ունեցել դատարանին ներկայացնել իրենց փաստարկները: Պահպանվել են դատավճիռների կայացման օրինական ժամկետները, որոշումները եղել են հիմնավորված և ժամանակին հրապարակվել են առցանց:

Հունիսի 19-ի դրությամբ Դատախազությունը ստացել է 338 հաղորդումներ ընտրախախտումների վերաբերյալ: Դեպքերի մեծ մասը ուղարկվել է ոստիկանություն

---

64 Ընտրական օրենսգրքի համաձայն, Ընտրական հանձնաժողովներն ի պաշտոնե հսկում են նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանումը: Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածը սահմանում է նախընտրական քարոզչության սահմանափակումներ, այդ թվում՝ վարչական ռեսուրսների օգտագործման արգելքը:

65 Գործերից երկուսով վարչական դատարանը անփոփոխ է թողել ԿԸՀ որոշումը, իսկ մեկ դեպքում թեկնածուն վերականգնվել է ցուցակում:

66 Գործերից երկուսով վարչական դատարանը անփոփոխ է թողել ԿԸՀ որոշումը, իսկ մեկ դեպքում թեկնածուն վերականգնվել է ցուցակում:

67 Հունիսի 6-ին Դատարանը որոշում է կայացրել, որ ԿԸՀ-ն չի բացատրել, թե ինչու է գտել, որ գովազդային վահանակները «ասոցացվում են քարոզչության հետ»: Ո՛չ Ընտրական օրենսգիրքը, ո՛չ ենթաօրենսդրական ակտերը չեն տալիս քարոզարշավի սահմանումը: Հունիսի 7-ին ԿԸՀ-ն կրկին ընդունել է նույն որոշումը, այս անգամ ՝ մանրամասն հիմնավորմամբ: Այնուամենայնիվ, դատարանն այն կրկին բեկանել է՝ նշելով, որ ԿԸՀ-ն չի կարող վերակայացնել որոշում, ինչը հակասում է Վարչական դատարանի վերջնական որոշմանը:

68 Մայիսի 31-ին ԿԸՀ-ն որոշումներ է կայացրել «Լուսավոր Հայաստան», «5164» շարժման և թեկնածու Տիգրան Արզաքանցյանի գովազդային վահանակները հանելու մասին: Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ բողոքարկումները պետք է ներկայացվեն իրավունքների հնարավոր խախտման պահից 3 օրվա ընթացքում:

հետագա փաստերի ստուգման, մինչ վարչական բնույթի հաղորդումները ուղարկվել են ԿԸՀ: Հարուցվել է 26 քրեական գործ, այդ թվում՝ ընտրակաշառքի տասնյոթ դեպքերի վերաբերյալ, մի քանի կասկածյալներ ձերբակալվել են:[69]

Օրենքը նախատեսում է քվեարկության արդյունքների բողոքարկման մի քանի մակարդակ: Սակայն, չնայած նախկին հանձնարարականներին՝ բողոքարկման իրավունքը սահմանափակված է ընտրություններին մասնակցող կուսակցություններով, դաշինքներով և նրանց ցուցակներում ընդգրկված թեկնածուներով:[70] Նրանք կարող են նաև բողոքարկել Տարածքային ԸՀ որոշումները ԿԸՀ-ում կամ վարչական դատարանում: ԺՄԻԳ ԸԴԱ-ի բազմաթիվ զրուցակիցներ նշել են, որ ընտրությունների արդյունքների ամփոփման յոթնօրյա ժամկետն ազդում է հետընտրական վեճերի լուծման վերջնաժամկետների վրա, քանի որ արդյունքների հետ կապված բոլոր բողոքներն ու դիմումները պետք է քննվեն այդ սահմանափակ ժամկետում:[71] Միայն ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցություններն ու դաշինքները կարող են բողոքարկել ընտրությունների վերջնական արդյունքները Սահմանադրական դատարանում, որը որոշում կայացնելու համար ունի 15 օր՝ սկսած դիմումը ներկայացնելու պահից:

ԸԴՄԱ-ի շատ զրուցակիցներ մտահոգություն են հայտնել, մի կողմից դատական համակարգի քաղաքականացված լինելու, մյուս կողմից դատական համակարգի անկախությանը միջամտելու կապակցությամբ: 2020թ., մինչ Սահմանադրական դատարանի վարույթում էին գտնվում քաղաքական առումով զգայուն գործեր,[72] Խորհրդարանն ընդունել

է Սահմանադրության անցումային դրույթների փոփոխություններ՝ Սահմանադրական դատարանի դատավորների լիազորությունների ժամկետի մասով, որի արդյունքում փոխվել է ՍԴ դատավորների կազմը:[73]

---

69 Քվեարկության օրվա դրությամբ այս գործերով քննությունը դեռ շարունակվում էր:

70 Այնուամենայնիվ, ընտրողների կողմից ընտրությունների արդյունքների բողոքարկման համար կարող է սահմանվել ողջամիտ քվորում:

71 Հետընտրական վեճերի համար սահմանված յոթնօրյա ժամկետն ընկնում է քվեարկության օրվա և ընտրությունների արդյունքների ամփոփման ժամանակահատվածի միջև, ինչը նշանակում է, որ բոլոր բողոքները պետք է ներկայացվեն, քննվեն, դրանց մասով որոշումները պետք է կայացվեն և վերադաս ատյանի դատարաններում բողոքարկումները պետք է քննվեն նշված ժամանակահատվածում:

72 Սահմանադրական դատարանի կազմին վերաբերող փոփոխություններն ընդունվել են 2020 թ. հունիսի 22-ին, նույն օրը, երբ Սահմանադրական դատարանը կայացրել էր նախկին նախագահ Քոչարյանին ներկայացված մեղադրանքի սահմանադրականության որոշմանը վերաբերող գործով նիստ նշանակելու մասին որոշում: 2021 թ. մարտի 26-ին Սահմանադրական դատարանն իր նոր կազմով հակասահմանադրական է համարել Քրեական օրենսգրքի այն դրույթը, որով պարոն Քոչարյանին մեղադրանք էր առաջադրվել:

73 Ի սկզբանե կառավարությունն առաջարկել է Սահմանադրական դատարանի անդամների պաշտոնավարման մասին սահմանադրական դրույթների փոփոխությունները դնել հանրաքվեի, հանրաքվեի օր նշանակելով 2020թ. ապրիլի 5-ը: Հանրաքվեն չեղյալ է հայտարարվել COVID-19 համավարակի պատճառով, և սահմանադրության անցումային դրույթներում կատարվել են

ՔՀԿ և միջազգային դիտորդներ

Իրավական դաշտը սահմանում է միջազգային և տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ընտրությունների դիտարկման հնարավորություն և թույլատրում է կուսակցությունների վստահված անձանց ընտրությունների օրը ներկա գտնվել տեղամասային կենտրոններում: Դիտորդական խմբերը չպետք է սատարեն կուսակցությունների թեկնածուներին, պետք է ընդունեն վարքագծի ներքին կանոնակարգեր և անցկացնեն դասընթացներ իրենց դիտորդների համար: Չնայած ԺՀՄԻԳ-ի նախկինում արված առաջարկություններին, Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որպեսզի ՔՀԿ դիտորդական խմբերն իրենց կանոնադրության մեջ ունենան ժողովրդավարությանը և մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող ուղիղ նպատակներ՝ դիտարկվող ընտրությունների մասին հայտարարությունից առնվազն մեկ տարի առաջ՝ դրանով իսկ ավելորդ սահմանափակում ստեղծելով դիտարկելու հնարավորության համար:[74]

Որոշ քաղաքացիական դիտորդական խմբեր մտավախություն են հայտնել առ այն, որ հավատարմագրման հայտեր ներկայացնելու համար սահմանված սուղ ժամկետը, այն է՝ ընտրության օրվանից 15 օր առաջ, բարդացրել է դիտորդների հավաքագրումը:[75] Հավատարմագրման համար դիմումները չեն կարող ներկայացվել էլեկտրոնային եղանակով, ինչը գործընթացն ավելի բարդ է դարձնում քաղաքացիական դիտորդական խմբերի և ԿԸՀ-ի համար:[76] Մինչդեռ միջազգային կազմակերպություններին թույլատրվում է ընտրատեղամասում ունենալ երկու դիտորդներ և մեկ թարգմանիչ, քաղաքացիական դիտորդական կազմակերպություններին թույլատրվում է ունենալ մեկ դիտորդ:

Հունիսի 5-ի վերջնաժամկետի դրությամբ ԿԸՀ-ն հավատարմագրել է 19

քաղաքացիական դիտորդական կազմակերպություն՝ ընդհանուր շուրջ 8 748 դիտորդներով, 8 միջազգային կազմակերպություն և 20 դիվանագիտական ու օտարերկրյա ներկայացուցչություններ: ԸԴՄԱ-ի որոշ զրուցակիցներ նշել են, որ որոշակի

փոփոխություններ, որոնք ընդունվել են խորհրդարանում: Սահմանադրությունը չի նախատեսում իր անցումային դրույթների փոփոխություններ:

74 Մայիսի 29-ին «Ռեսուրսների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության հավատարագրումը մերժվել է՝ այս պահանջը չբավարարելու համար:

75 Ընտրական օրենսգրքի 2021 թվականի մայիսի փոփոխությունները, որոնք ուժի մեջ կմտնեն 2022 թ., Քաղաքացիների դիտորդական կազմակերպությունների գրանցման ժամկետը կավելացնեն ընտրությունների օրվանից 10 օր առաջ և հնարավորություն կտան անհատ դիտորդների ցուցակը ներկայացնել ընտրությունների օրվանից մինչև 3 օր առաջ:

76 2021 թվականի մայիսի Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով ՔՀԿ դիտորդներին տրվեց համար էլեկտրոնային գրանցման հնարավորություն:

քաղաքացիական դիտորդական կազմակերպություններ սերտորեն կապված են կուսակցությունների և դաշինքների հետ: Օրենքը թույլ է տալիս ՏԸՀ-ներին տեղամասերի ներսում ՔՀԿ դիտորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների թիվը սահմանափակել 15-ով, եթե գերբեռնվածությունը բացասաբար է անդրադառնում ընտրական գործողությունների վրա: Թեև ԸԴՄԱ-ի որոշ զրուցակիցներ անհանգստություն են արտահայտել այս դրույթի հնարավոր կամայական կիրառման հետ կապված, այն գործնականում խնդիր չի առաջացրել ընտրությունների օրը:

Քվեարկության օր

Քվեարկության օրը հիմնականում խաղաղ է եղել՝ ըստ ԿԸՀ հայտարարության ընտրողների 49.4 տոկոս մասնակցությամբ: ԿԸՀ-ն սկսել է իր կայքում հրապարակել ընտրության նախնական արդյունքները հունիսի 21-ից:

Բացումը դրական է գնահատվել բոլոր դիտարկված 123 ընտրատեղամասերում: Սահմանված ընթացակարգերը հիմնականում պահպանվել են, սակայն 12 ընտրատեղամասերում դիտարկվել է աննշան ուշացում:

Քվեարկությունը դրական է գնահատվել դիտարկված ընտրատեղամասերի 98 տոկոսում: Թեև ԸԴՄԱ դիտորդները ընթացքը գնահատել են սահուն, թափանցիկ և լավ կազմակերպված, նրանք զեկուցել են կուսակցությունների և դաշինքների վստահված անձանց կողմից միջամտության և հաճախակի կուտակումների, ինչպես նաև COVID19 համավարակից պաշտպանության բոլոր միջոցառումների նկատմամբ ընդհանուր անտեսման մասին:

ԸԴՄԱ դիտորդների կողմից դիտարկված ընտրատեղամասերից 7 տոկոսի մերձակայքում դիտարկվել են քարոզչական նյութերը և գործողություններ: Ընտրատեղամասերի շրջակայքում լարվածության և հուզումների թվով 23 դեպք է դիտարկվել (2 տոկոս), ինչպես նաև ստացվել են առանձին տեղեկություններ ընտրակաշառքի և ընտրողների նկատմամբ ճնշման գործադրման մասին: ԸԴՄԱ դիտորդները զեկուցել են, որ դիտարկված ընտրատեղամասերից 14 տոկոսում կուտակումներ են եղել, մասնավորապես Երևանում և այլ քաղաքներում: Ընտրատեղամասերի մոտավորապես 67 տոկոսը հասանելի չեն եղել ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ 32 տոկոսում դասավորությունը հարմարեցված չի եղել վերոգրյալ խմբին պատկանող ընտրողների համար:

Կուսակցությունների և դաշինքների վստահված անձինք ներկա են եղել դիտարկված ընտրատեղամասերի 97 տոկոսում, իսկ ՔՀԿ դիտորդները՝ 77 տոկոսում: ԸԴՄԱ դիտորդները

նշել են չարտոնված անձանց ներկայության մասին դիտարկված ընտրատեղամասի 8 տոկոսում, մեծամասամբ ոստիկանների, ովքեր հրավիրված չեն եղել քվեարկության սենյակ

ՏԸՀ նախագահի կողմից: Դիտարկված 73 ընտրատեղամասերում (6 տոկոս) որոշ անձինք՝ ինչպիսիք էին ՏԸՀ անդամները, միջամտել կամ ուղղորդել են ընտրական գործընթացը, դեպքերից 55-ի պարագայում այդպիսիք եղել են վստահված անձինք: Պաշտոնական բողոքներ են ստացվել 7 դիտարկված ընտրատեղամասերի 7 տոկոսում: ԸԴՄԱ-ի կոմիդ դիտարկված 43 տոկոս տարածքային ԸՀ-ները նախագահել են կանայք և ընդհանուր առմամբ դիտարկված տարածքային ԸՀ-ների 65 տոկոս անդամները ընտրատեղամասերում կանայք են եղել:

ԸԴՄԱ դիտորդները ԸՆՍ-երի առնչությամբ խնդիրներ չեն արձանագրել և ընտրողների նույնականացման գործընթացը եղել է գրեթե ամբողջապես սահուն: Դիտարկված ընտրատեղամասերի 7 տոկոսում մեկ կամ երկու ընտրող հետ է ուղարկվել հիմնականում սխալ ընտրատեղամաս գալու, ընտրողների ցուցակում չգտնվելու կամ անձը հաստատող փաստաթուղթ վավեր չլինելու պատճառով: ԸԴՄԱ դիտորդները նշել են որ 8 ընտրատեղամասերում ընտրողներին թույլատրվել է քվեարկել առանց անձը հաստատող վավեր փաստաթղթի: Ընտրական ընթացակարգերը հիմնականում պահպանվել են, բացառությամբ երբ ոչ բոլոր ընտրողների հաստատող կտրոններն են կնքվել տարածքային ԸՀ-ի կողմից կամ պահվել ընտրողի քվեարկելուց հետո: ԸԴՄԱ դիտորդները արձանագրել են ընտրության գաղտնիության հետ կապված որոշ խնդիրներ, ներառյալ այն, որ ոչ բոլոր ընտրողներն են գաղտնի քվեարկել (դիտարկված ընտրատեղամասերից 4-ում), կամ ընտրողները չօգտագործված քվեաթերթիկները քվեախցիկից դուրս են հանել (2 տոկոս):

ԸԴՄԱ դիտորդները զեկուցել են սահմանափակ թվով խախտումների դեպքերի մասին, ինչպիսիք են խմբակային քվեարկությունը (3 տոկոս), վստահված անձի քվեարկությունը (1 տոկոս), կամ ընտրողների վրա ազդելու փորձերը (1 տոկոսից պակաս): Առանձին դեպքեր են հաղորդվել ընտրողներին քվեաթերթիկների ամբողջական փաթեթ չտրամադրելու, ինչպես նաև մեկ դեպք երբ ՏԸՀ անդամը ընտրողին տրամադրել է արդեն իսկ քվեաթերթիկ պարունակող ծրար: Դիտարկված ընտրատեղամասերի 3 տոկոսում քվեատուփերը պատշաճ կերպով կնքված չեն եղել:

Ձայների հաշվարկը դրական է գնահատվել դիտարկված 97 ընտրատեղամասերից 91-ում, ուր արձանագրվել և բնութագրվել է բարձր մակարդակի թափանցիկության, և, ընդհանուր առմամբ, սահմանված ընթացակարգերը պահպանվել են: Գրեթե բոլոր դիտարկված ձայների հաշվարկի գործընթացներին ներկա են գտնվել կուսակցությունների և դաշինքների վստահված անձինք և քաղաքացի դիտորդներ: ԸԴՄԱ դիտորդները զեկուցել են հաշվարկի գործընթացին անհարկի միջամտության 10 դեպքի մասին, որոնցից 9-ը՝ վստահված անձանց կողմից: ԸԴՄԱ դիտորդները զեկուցել են տարածքային ԸՀ-ների կողմից քվեատուփը բացելուց առաջ հիմնական կանոններին չհետևելու միայն մի քանի դեպքերի մասին: Այդուհանդերձ, ըստ ԸԴՄԱ դիտորդների, 20 տեղամասերում իրականացված ձայների հաշվարկիարդյունքում ընտրողների ցուցակում ստորագրությունների թիվը չի համընկել

ԸՆՍ-ի տրամադրած ընտրողների

մասնակցությունը հաստատող կտրոնների թվի հետ: Ձայների հաշվարկի ընթացակարգերը հիմնականում պահպանվել են և ԸԴՄԱ դիտորդները նշել են սակավաթիվ նշանակալի ընթացակարգային վրիպակների կամ կոպիտ խախտումների մասին, ինչպիսիք են տարածքային ԸՀ անդամներին սպառնալը (2 արձանագրություն) կամ քվեարկության պաշտոնական նյութերի կեղծման վկայությունները (3 արձանագրություն): Քվեաթերթիկների վավերության որոշումը եղել է ողջամիտ և հետևողական, ձայների հաշվարկի բոլոր դեպքերում, բացառությամբ համապատասխանաբար 4 և 1 դեպքերի: Տարածքային ԸՀ անդամներից բացի, այլ անձինք ևս մասնակցել են թվով 14 տեղամասերում ձայների հաշվարկի գործընթացին , և 4 ընտրատեղամասերում տարածքային ԸՀ անդամները նախապես ստորագրել են արդյունքների արձանագրությունը: Դիտարկված տարածքային ԸՀ- ներից 21-ը արդյունքների արձանագրությունները լրացնելու հետ կապված խնդիրներ են ունեցել: Դիտարկված ընտրատեղամասերից 4-ում տարածքային ԸՀ-ն չէր փակցրել արձանագրության պատճենը հանրային իրազեկման նպատակով:

Աղյուսակավորման գործընթացը բացասական գնահատական է ստացվել դիտարկված 32 ՏԸՀ-ներից 6-ի վերաբերյալ : Մինչդեռ աղյուսակավորումը մեծամասամբ անցել է աննշան ընթացակարգային բացթողումներով կամ խախտումներով, բազմաթիվ ՏԸՀ-ներում հանձնման գործընթացը եղել է թերի կազմակերպված և եղել են բազմաթիվ զեկույցներ աշխատանքային տարածքի փոքր լինելու և կուտակումների մասին, ինչը բացասաբար է անդրադարձելգործընթացի և թափանցիկության վրա: ԸԴՄԱ դիտորդները չեն արձանագրել միջամտության դեպքեր աղյուսակավորման գործընթացին: Ի տարբերություն տարածքային ԸՀ-ների, վստահված անձինք ներկա էին դիտարկված ՏԸՀ-ներից միայն 13 -ում:

Քվեարկության օրը, ԿԸՀ-ն գրանցել է խախտումների մասին 27 արձանագրություն, որոնցից որոշները հաստատվել են: Դրանք ներառել են ընտրողների ուղղորդում, և վստահված անձանց կողմից միջամտության դեպքեր: Գլխավոր դատախազությունը հայտնել է, որ քվեարկության ժամերի ընթացքում ստացել է խախտումների մասին 319 հաղորդում, որոնցից 79՝ քվեարկության խոչընդոտման, 89՝ մեկից ավելանգամ քվեարկելու կամ այլ անձի փոխարեն քվեարկելու, 49՝ քվեարկության գաղտնիության խախտման, 69՝ ընտրակաշառքի վերաբերյալ: Հարուցվել է 6 քրեական գործ: Ի հավելումն, ոստիկանությունը հայտնել է ստացված դեպքի 87 հաղորդումների մասին: Քվեարկության օրը, հատուկ քննչական ծառայության կողմից ձերբակալվել է երեք անձ, այդ թվում թեկնածու՝ Վայոց Ձորի մարզում ընտրակաշառք բաժանելու մեջ կասկածվելու հիմքով:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Երևան, 21 հունիսի, 2021թ.: Նախնական արդյունքների և եզրակցությունների մասին սույն հայտարարությունը կազմվել է ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ խորհրդարանական վերաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) և Եվրոպական խորհրդարանի (ԵԽ) ընդհանուր նախաձեռնությամբ: Գնահատումն իրականացվել է որոշելու արդյոք ընտրություններն անց են կացվել ԵԱՀԿ հանձնառություններին, Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների չափանիշներին և ազգային օրենսդրությանը համապատասխան: Ընտրությունների միջազգային դիտորդական այս առաքելությանը ներգրավված կազմակերպություններից յուրաքանչյուրն ընդունել է 2005 թ. Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների հռչակագիրը:

Մարգարետա Կեդերֆելտը նշանակվել է ԵԱՀԿ պաշտոնական ներկայացուցիչ, հատուկ համակարգող և կարճաժամկետ դիտորդական առաքելության ղեկավար: ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի պատվիրակությունը գլխավորել է տիկին Կարի Հենրիկսենը, իսկ ԵԽԽՎ պատվիրակությունը գլխավորել է Ջորջ Կատրուգկալոսը: Օուեն Մերֆին գլխավորել է մայիսի18-ին Հայաստան գործուղած ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելությունը:

Նախնական արդյունքների և եզրակցությունների մասին հայտարարությունը արվում է մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը: Ընտրությունների վերջնական գնահատումը կախված կլինի մասամբ ընտրական գործընթացի հաջորդ փուլերի իրականացումից՝ ներառյալ հաշվարկը, աղյուսակավորումը և արդյունքների հայտարարումը, հետընտրական հնարավոր բողոքների վարումը և հնարավոր երկրորդ փուլը: ԺՀՄԻԳ-ը կթողարկի համապարփակ վերջնական զեկույց՝ ներառյալ առաջարկներ հնարավոր բարեփոխումների համար, ընտրական գործընթացի ավարտից շուրջ ութ շաբաթ անց: ԵԱՀԿ ԽՎ-ն կներկայացնի իր զեկույցը 2021թ. հուլիսի 5-ին, իր մշտական հանձնաժողովի հանդիպման ժամանակ: ԵԽԽՎ-ն կներկայացնի իր զեկույցը Ստրասբուրգում 2021թ. սեպտեմբերի կիսանստաշրջանի ժամանակ:

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ներառում է մայրաքաղաքում տեղակայված 16 փորձագետներ և 26 երկարաժամկետ դիտորդներ՝ պետության ողջ տարածքում: Ընտրության օրը 37 երկրից գործուղվել են 344 դիտորդ, որոնցից՝ 247-ը ԺՀՄԻԳ-ի կողմից, ԵԱՀԿ ԽՎ 73 անդամից բաղկացած պատվիրակություն -ից և 24 անդամից բաղկացած պատվիրակություն ԵԽԽՎ-ից: Կանայք կազմել են դիտորդների 41 տոկոսը: Քվեարկության բացումը դիտարկվել է 129ընտրատեղամասերում, քվեարկության ընթացքը՝1 150 ընտրատեղամասերում երկրի ողջ տարածքով: Արդյունքների հաշվարկը դիտարկվել է 107 ընտրատեղամասերում և աղյուսակավորումը 32 տարածքային ԸՀ-ներում:

ՄԸԴԱ-ն ցանկանում է շնորհակալություն հայտնել ՀՀ կառավարությանը՝ ընտրությունները դիտարկելու հրավերի համար, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը՝ աջակցության համար: ՄԸԴԱ-ն

ցանկանում է համագործակցության համար շնորհակալություն հայտնել նաև բոլոր մյուս պետական
մարմիններին,

լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ինչպես նաև միջազգային հանրության ներկայացուցիչներին:

Տեղեկատվության համար կարող եք կապվել ստորև նշված անձանց հետ՝

- Օուեն Մերֆի, ԺՀՄԻԳ ԸԴԱ ղեկավար, Երևան Հեռ.՝ +374 91 062061 (մինչև հուլիսի 3-ը)
- Կատյա Անդրուշ, ԺՀՄԻԳ խոսնակ, հեռ.՝ +48 609 522 266 կամ Համաձիրիպի Մանիկովա,ԺՀՄԻԳ ընտրությունների խորհրդատու, Վարշավա, հեռ.՝ +48 723 960 008
- Ֆրեյա Կոչի, ԵԱՀԿ ԽՎ, հեռ.՝ +45 31 46 85 73
- Բոգդան Տորկատորիու, ԵԽԽՎ, էլ. հասցե՝ Bogdan.torcatoriu@coe.int

ԺՀՄԻԳ ԸԴԱ հասցե՝
«Արմենիա Մարիոթ» հյուրանոց, Արարատ թև, 5-րդ հարկ,
Ամիրյան 1 փողոց, 0010, Երևան, ՀՀ
Հեռախոսահամար՝ +374 91 062061,
Էլ. Հասցե՝ office@odihr.am